



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

835
2 - 96



~~1933~~ N 345



2004

18804

ՅԱԿՈՎՅԻ ԵՐԼԻՒԽ.

Պ. Ե. Պ.

ՄԵՆՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԵՎԻ
ՆԵՐԻ ՀԵՄԵՐ

(Դրա Գրանց Հաջողակ Գերմանացի
Հայութնագիւն.)

ԹԱՐԴԱՄԱՆԵՑ

Վղեքսանդր Հ. Քալանթարեանց

—♦—

Բ Ե Գ Ա Կ

Դ Տ Ա Ր Ա Ն Ի Կ Ա Ր Ա Փ Ե Ա Ն Գ Ի Ռ Ա Կ :

100

1874

$$\begin{array}{r} 835 \\ \times 2 \\ \hline 1670 \end{array}$$

四

83

ЗЕЧОВІ ВІСНИ.

~~# 804~~

۶۱۹

ՄԵՐԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԽՆԵՐԻ

卷之三

(Գործ Պարանց Հաքման Գեղահանուց և առավելագույն դրվագից.)

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Աշխարհական պատմութեան գիտական համակարգը՝ Վալենինա

1936

CEMET

• Ե Տպարանի Ա. Ուլյափէեանցի. Ընկ:

1874

14 . 06 , 2013

1410

卷之三

Дозволено Цензурою Тифлисъ.

19 Сентября 1873 года.



3186
40

1949

իւր անկեղծ ընկերակցին ուղարկելու համար պատճենագիր գտվեց:

Թամասի Սկրտչեան

44 00 0019
Մարդարեանցին

‘Նուիրում է’

Ձարգմանողը

Եղնիւ Բնկեր
թառման Ակրտչեան.

Պրանց Հօֆման գերմանացի մատենագրի շարադրութիւնների շատերը վերաբերումն մանուկների կրթութեան և բարոյականութեան: Երեւելի հեղինակը լաւ հասկանում էր, որ չօրուցամաք կրթութիւն քարոզելով չէ կարելի կրթել մանուկներին և նրանց ուղեղի մեջ մտցնել բարոյականութեան և աշխատասիրութեան սկիզբները: “Ա, դիտէր Փէնելօննեան այն ձշմարիտ փաստը թէ մանուկները շատ հետաքրքիր են և չափաղնց սիրումն զուարճալի և ծիծաղական պատմութիւններ. բայց պէտք է օգտուիլ այս փաստով նրանց կրթելու համար:” Կրթութիւնը՝ պատմական և ծիծաղական ձեռով աննշմարելի մտնում է մանուկի սիրութ:

Ես ինքս տեսած եմ մի քանի պատանիներ, որ միշտ աշխատում են եղել պ. Հօֆմանի միշտ շարադրութեան. „Ժամանակը արծաթէ” հիման վերայ:

Եթէ վերջապէս մեք նայենք և այն փաստին, որ Գերմանիայի կամ Եւրոպայի միւս երկրների մանկական գրադարանները մի մասամբ պ. Հօֆմանի շարադրութիւններից են բաղկացած. ազատ կարող ենք ասել ո՞ր

չենք սիսալուիլ եթէ հայ մանուկների սկըզ-
բնական ընթերցանելի գրեանքը մի մասամ-
վեր առնենք պ. Հօֆմանի շարադրութիւն-
ներից:

Եթէ այս շարադրութիւններից մի քանիսը
այնպիսի շօշափելի մի օգուտ էլ չունենան.
դոնէ զուարձալի են. բայց անմեղ զուարձա-
խօսութիւնը, ինչպէս յայտնի է, մանուկներին
գրեանց վերայ սէր գձելու գլխաւոր միջոց-
ներից մէկն է:

Ոիրելի՛ ընկե՛ր. մեր գրականական ժո-
ղովներում ես նկատել էի միշտ. որ Ձեր յօ-
դուածները կամ իսօսակցութեան առարկան
աւ ելի վերաբերումէր մանկավարժութեան և
Դրոք միշտ արծարծում էիք միայն այդ իդէան:
Ա ասնորոյ ուրախութեամբ սրտի և 'ի նշան
յարգանաց նուիրում եմ Ձեզ իմ թարգմանու-
թիւնը, ի բրե աւելի համապատասխան Ձեր
մանկավարժական պահանջներին:

Մնամ միշտ Ձեզ յարգող

Աղեքսանդր Հայրապետեան

Քալանթարեանց:

729
Գ. Ա. Խ. Խ. Ե. Ա. Ա. Յ.

Արք

Վնդղայի մայրաքաղաք Լոնդոնը գիտե-
լումէ թէմզա գետին վերայ. Այս գետի
վերայ շատ նաւեր կան տափակ յատակով,
որոնք անուանւումեն Գլուխոնատով: Վայդիսի
գետանաւակներից մէկը կառավարումէր Յով-
հաննէս Լորլիսը (Յանարդանէր). որոյ Յա-
կովը որդուն համար մեք մտադիր ենք
պատմելու:

Օեր Յովհաննէս Լորլիսը շատ ժամա-
նակից 'ի վեր իւր կնկայ հետ միասին գտն-
ւումէր գետանաւակի վերայ. Նրա բոլոր գործը
այն էր, որ ապրանքներ տանի ու բերի:
Նրա կինը քիչ էր գուրս գալիս նաւի
տախտակամածը նա միշտ նստում էր նաւակի
սենեկի մէջ և օղի (աղասի) էր խմում, որ
իրա ասելով, տաք անայ թէմզայի խոնաւ և
ամպոտ օդի մէջ:

Առաջ Յովհաննէսը բոլոր ջանքով աշ-
խատումէր իւր կնկան հեռացնել այս երկիւ-
ղալի սովորութիւնից. բայց բոլորը 'ի զուր:
Կա քիչ էր գուրս գալիս ջրի ափը և գե-
տանաւակի վերայ քիչ պարապմունք եղած
ժամանակը, շատ տիրումէր: Կա կարծումէր,
որ օղին կ'պահպանի իրան ցրտից և թէ նա

օգտակար է մարմնի համար, վասնորոյ նաբոլորպին անձնատուր եղաւ այս խմիչքին և այնքան խմում էր, որ վերջապէս սրանո էլ խանգարեց իւր առողջութիւնը:

(Օրսաօրէ կինը գերանում էր և ծանրս շարժ էր դառնում: Նրա խելքը քիչ ք պակասում էր և վերջապէս այսպէս շատ խմելուց նա դարձաւ կիսախելագար: Երբ որ այսպէս դարձաւ նրա մարդն էլ (Յովհաննէսը)՝ ի հարկէ ակամայ էր նրա հետ խօսում և ցերեկուայ շատ մասը անց էր կացնում լուս և ծիելով:

Վ. յսպիսի հանգամանքները՝ ի հարկէ օգտակարէ՛էին փոքրիկ Յակովիք դաստիարակութեան համար: Կ. րա հայրը ոչ կարգալ գիտէր, ո՛չ գրել այնպէս որ ոչինչ էլ չ'էր կարող սովորեցնել իւր որդուն: Վ. յբբենարանի փոխարէն Յակովը սովորեց մի քանի նշաններ, որոնք շատ նման էին հասարակ գրերի և նշանակումնեին զանազան ապրանքներ և կշիռներ: Վ. գիրը նշանակում էր կէս ման ցորէն, Բ. մի բօշկա (պահան) օղի, թամբ արկդ ծխախոտ և այլն: Իսացի սրանից Յակովը, երբ որ փոքր ինչ մեծացաւ սովորեց ուղղել առագաստները և զեկը, միտք էր պահում ջրի բոլոր ծանձաղները և նրանց անունները, այնպէս որ արդէն կարողանում

էր կառավարել նաւը, երբոր նա գնում էր ջրի ընթացքով: Թաէկ նա գեռ այնքան ուժեղ չ'էր, բայց շատ ճարպիկ էր, ուշագիր, աշխաց և վարժուած:

Օ. եր Յովհաննէսը սովորութիւն էր արել մի բանի առածներ միշտ ասելու, երբ որ փոքր ինչ անյաջողութիւն էր լինում: Վ. ուղին առածը սա էր, „լացով վերքը չ'ես առողջացնիլ:” Վ. յս գործ էր ածում նա ամենայն անյաջող գիտուածներում, երբ կամենում էր իւր վիշտը թեթևացնել: Միւս առածը սա էր, „մի յուսահատուիր:” Վ. յս առածը նա գործ էր ածում, երբ ուրեխը նրա տեղը սկսում էր բարկանալ և շարանալ: Օ. եր Խրիսին համարեա միշտ սա միտթարում էր, կակլացնում և հանգստացնում: Երբորդ սիրելի առածը սա էր, „կ'աղացուի, ալիւր կ'գառնայ:” Վ. յս խօսքը նրան միսիթարումէր և պաշտպանում անբաղդութեանց ժամանակ:

Եւ որովհետեւ այս առածները նա գործ էր ածում միշտ, հասկանալի է, որ Յակովիքն էլ շատ անգամ սկսութեր միև նոյնը կրկնել: Եւ ինչպէս հօրը, այնպէս եւ որդուն առածները պէտք էին գուլիս հոգւոյ զանազան դրութիւնը յայտնելու ժամանակ: Վ. մենայն հանգամանքում լեզուի վերայ պասյութ էին գալիս դրանք և շատ անգամ մեծ միթա-

րութիւն էին պատճառում:

Յակովբի տասներկուերորդ տարում Նրա մայրը մեռաւ շատ երկայն հիւանդութիւնից յետոյ, որի համար Նրան ուղարկել էին հիւանդանոց: Ահւանդի բացակայութիւնը սովորական էր գարձած թէ Յակովբի և թէ Նրա հօր համար, այնպէս որ մօր կորուստը երախայի վերայ մի առանձին տպառութիւն չունեցաւ:

Ինյայց մի կէս տարուց յետ մեր մանուկին պատահեց մի ուրիշ գժբաղդութիւն: Ո՞ի անգամ ամբողջ օրը ծեր Յովհաննէս Խրլիսը չարչարում էր, տանջուսմբ գլխացաւով, այնպէս որ, չկարողանալով կառավարել գետանաւակը յանձնեց որդուն: Այն օրը հանգիստ անցկացաւ: Երեկոյեան դէմք վերկացաւ մի սաստիկ քամի. մանուկը հօր համաձայնութեամբ խարիսխը գձեց և նաւը կանգնացրեց: Որանից յետոյ Յակովբը կերաւիր աղքատիկ ընթրիքը, գետից ջուր վեր առաւ, խմեց և նայեց ամէնը թէ կարգի է նաւի վերայ, և պարապութիւնից նստեց տախտակամածի վերայ նայելու խաւար ու մոայլ շըջակայքը: Երկնքումը փայլում էին պայծառ աստղները: Յակովբը չէր հասկանում Նրանց գոյութիւնը և համարում էր Նրանց կանթեղներ երկիրը լուսաւորելու

Համար գիշեր ժամանակը: Կա, չէր հասկանում և չէր կարողանում բացատրել թէ ո՞վ է Նրանց վառել և ինչո՞վ: Ո՞ւ մէկ մարդ խեղճին չէր պատմում աշխարհքի հրաշք. Ները, ոչ մէկը չէր բացատրում Նրան շըջապատող երեսյթները:

Ռոյապիսի անորոշ մտածութեանց մէջ էր Յակովբը, երբ յանկարծ լսեց մի բարձր և պինդ ձայն տախտակամածի տակից, որ Նրան վախեցրուց սաստիկ: Վրանից յետ լսեց, որ մի բան սաստիկ գետին ընկաւ և վերջապէս բոլորը հանդարտուեց: Յակովբը իսկոյն վեր թռաւ, վաղեց նաւի յետի կողմը և մտաւ նաւի սենեակը: Ռոյտեղ սաստիկ լուսութիւն էր տիրում: Պատից կախուած կանթեղը աշօտ (լոյլ) լուսաւորումէր այս փոքրիկ բնակարանը. այնպէս որ մանուկը դժւարութեամբ էր որոշում առարկաները: Վերջապէս նա տեսաւ հօրը, գետին ընկած, անշարժ եւ տարածուած ձեռներով: Խեղզ մանուկը բոլորովին սարսափ սծ գողում էր բոլոր անձնով: Վա, ընկաւ հօր վերայ եւ սկսեց շարժել կանչելով. „Հայրիկ, Հայրիկ!“ Ինյայց կենդանութեան նշյլ չէր երեսում Նրա վերայ. նա մեռած էր արիւնի կաթուածից: Ո՞ի քանի բոպէ որբ Յակովբը անշարժ կանգնած էր եւ յետոյ նա սկսեց

Հեկեկալով լալ: Ո՞էն. մինակ հօր դիակի առաջ անբաղդ մանուկը երկար ժամանակ լաց եղաւ: Իսյյց ժամանակ առ ժամանակ նրան պատում էին սարսափի եւ յուսահատութիւն: Չնայելով սրան, նա չվստահացաւ գուրս գալու նաւի տախտակամածը, նա շատ վախենում եւ սարսափում էր, որ այնտեղ պէտք է մնայ մթութեան և խաւարի մէջ մէն-մինակ աշխարհիս մէջ: Ա երջապէս երեխային բոլորովին յաղթեց տիրութիւնը, նա ընկաւ մոռացութեան մէջ եւ քնեց մեռած հօր դիակի մօտ:

✓ Գ. Ե. Ա. Է. Բ. Կ. Բ. Ա. Ի. Պ.

Յակովը ուսումնարանում:

Ո՞իւս առաւօտը, երբ Յակովը դարձնեց մտաբերեց բոլորը ինչ պատահել էր նրա հետ անցեալ երեկոյ: Նեկեկալով նա գրկեց իւր հօրը բայց երբ նա դիմաւ ցուրտ եւ սառած դիակին նրա վերան մի այնպիսի սարսափ եկաւ, որ նա գուրս վազեց տախտակամածի վերայ եւ էլ չվստահացաւ սենեակը գալուալու: Փոքր առ փոքր նա սկսեց մտածել իւր ներկայ գրութեան վերայ: Էւաւը, որի վերայ նրա հայրը կառավարիչ էր, պատկանում էր, ինչքան նա

գիտէր, մի հարուստ վաճառ սկանի, Դրում-մօնդ անունով, որ բնակւում էր Ծաւալպայի ներքին ափում: Երեխան մտածեց, որ գնայ նրա մօտ: Ինչպէս ասաց, այնպէս էլ արաւ. նա կորեց խարիսխի շուանը, որովհետեւ իրան այնքան ոյժ չունէր, որ խարիսխը գուրս քաշէր: Ո՞րանից յետոյ ձեռը տռաւ ղեկը և բաւականին հմտութեամբ ու զգուշութեամբ գարձրուց գետանաւակը դէպ ՚ի ջրի հոսանքը և երկու ժամից յետոյ հասաւ ցանկացած տեղը: Ո՞իւս նաւակների թիավար-ների օգնութեամբ նա կապելով գետանաւակը ափին, գուրս եկաւ և գնաց Դրումմօնդի մօտ նրա տունը, ուրտեղ այս ժամանակ նա իւր կնոջ և հատիկ աղջկայ հետ գտնեւում էր մի սենեկում: Յակովը արտասուալից պատմեց մանրամանաբար իւր գժբաղդութիւնը: Իսյյց Դրումմօնդը բոլորովին չհաւատաց և ուղարկեց իւր գործակատարին նաւը իմանալու արդեօք բոլորը այնպէս է պատահել, ինչպէս պատմում է Յակովը:

Յակովը սկսեց պարապութիւնից այս կողմ այն կողմ նայել. նրա աչքին շատ առարկաներ գեռ բոլորովին նոր էին երեսում: նա չէր կարողանում համարեա նրանց բացարել այլ միայն նախագուշակում էր: Եւ յերաւի առաջին անգամ էր նրան պատահել

տեսնել հողի վերայ բնակարան, մինչև այս
ժամանակ նա շատ սակաւ էր նաւից ցամաք
դուրս եկել:

Ծուտով դարձաւ գործակատարը և
հաստատեց Յակովի բոլոր պատմածները:
Դրումմօնդը սկսեց այնուհետև հարցնել
Յակովին, արդեօք նա ունի ազգականներ:
—Ոչ պատասխանեց մանուկը:

—Եւ ծանօթ էլ չունիս ափումբնակողներից:
—Ոչ, ես համարեա ափում չեմ եղել
պատասխանեց Յակովը:

—Գիտե՞ս դու խելք մանուկ, որ դու որբ ես:
—Ո՞րբ ի՞նչէ, հարցրուց Յակովը:

—Աս նշանակումէ դու չունիս ո՛չ հայր, ո՛չ
մայր, ասաց տիկին Դրումմօնդը:

—Ճշմարիտ է, երկուսն էլ չկան, ասաց
հեկեկալով Յակովը, բայց ուլացով վերը
չես առողջացնիլ:

—Վայ' ի՞նչ ես մտածում, հարցրուց
Դրումմօնդը, նայելով զարմացմամբ երեխայի
վերայ, նրա վերջին խօսքերից յետոյ:

—Չեմ իմանում, պատասխանեց Յակովը,
իմ հայրս կամէր միշտ, մի յուսահատուիր,
ուրեմն ինչո՞ւ պէտքէ յուսահատուիմ:

—Բայց հասկանում՞ս զաւակս, ասաց տիկին
Դրումմօնդը, ինչպէս մեծ գժբաղդութիւն է,
որ պատաշելէ երեկ երեկոյին: Յակովը սըր-

րեց արտասուքը աչքերից և թշերի վերայից
և ասաց,,, կաղացուի, ալիւր կդառնայ:,,
Դրումմօնդը և նրա կինը զարմացմամբ
միմեանց վերայ նայեցին:

—Ինձ գեռ չէ պատաշել այսպիսի մանուկ,
ասաց Դրումմօնդը: Բայց չնայելով նրա պա-
տասխանների սրութեանը, նա տաք սրով
մանուկ է երեւում: Բայց աս'ա ինձ դու,
Յակովը, կարդալ և գրել գիտես թէ ո՛չ:

—Ոչ, բայց կ'ցանկայի գիտենալ, վերաբե-
րեց Յակովը:

—Ոչ-այդ կարելի բան է, ասաց Դրումմօնդը:
Դու կ'սովորես ոչ թէ միայն կարդալ գրել
այլ և շատ ուրիշ բաներ, իսկ յետոյ կ'տես-
նենք, ինչ պէտք է անել:

—Բայց ես առանց դրան գիտեմ ինչ պէտք
է անել, խօսքը կտրեց Յակովը: Դուք
պէտք է մարդ ուղարկէք Ծակագիր իմ
այնտեղ թողած խարիսխը պտուելու և բե-
րելու:

Դրումմօնդը ժպապ և քմծիծաղ ասաց.
Դու ճշմարիտ ես Յակովը և այդ շուտով
կ'կատարուի. բայց դու վայ' խոհանոց և
ինդրիր, որ քեզ կերակրեն. ես կարծեմ դու
բաւականին քաղցած կ'լինիս:

Յակովը շուրջ եկաւ, բայց չ'ը գի-
տում, որ գնայ, վասնորոյ Դրումմօնդի աղ-

զիկը փոքրիկ Այսան բռնեց երեխայի՝ ձեռը
և նրան տարաւ։ Յակովբը, 'ի շնորհակալու-
թիւն Այսայի այսպիսի բարութեան քրթ-
մընջաց նրա ականջին։

— Ապասի՛ր, եթէ իմ ձեռս մի դանակ և փայ-
տի կտոր կ'ընկնեն, ես քեզ համար մի նա-
ւակ կ'փորեմ. և ես անպիտանի մէկը լինիմ,
եթէ այդ նաւակը գեղեցկապէս չլողաց ջրի
վերայ։ Այսան ուրախանալով այս խօսմուն-
քով. պատմեց այս բանը իւր ծնողներին։
Դրումմօնդը Յակովբի այս խօսքերի մէջ
նկատեց առաւելապէս նրա բարութեան նոր
ապացոյց և ասաց կնոջ։

— Վմուսինս, դու կչամաձայնուիս կարծեմ
այս մանուկին մէզ մօտ պահելու, նրա հա-
մար հօգալու եւ ուսումնարան տալու։

Տիկին Դրումմօնդը բոլորովին համաձայ-
նուեց իւր մարդու առաջարկութիւններին և
այսպէս Յակովբը դտաւ իրան բարերար։
Ինյց այս ժամանակը խեղճ մանուկը նստած
էր խօհանոցում եւ լաց էր լինուեմ, թէեւ
արտառութիւնը չ'էր արգելում նրա կերակուր
ուտելուն. նա աշխատում էր, ինչքան կա-
րող է միմարուիլ իւր երեք առածներով։
Հօր վերայ մտածելու ժամանակ Յակովբը
կրկնում էր. „լացով վէրքը չես առողջացնիլ։”
Երբ յիշում էր մօրը՝ արտասուքով ասումէր.

„մի յուսահատուիքը։” Խակ երբ ներկայանում
էր նրա առաջին նրա տխուր ապագան. նա
մսիթարուումէր նրանով թէ , Կ'աղացուի,
ալիւր կ'դառնայ։”

Դյապէս արտասուքի եւ տրտմութեան մէջ
նա անց էր կացնում իւր օրերը, մինչեւ որ
նրան տուին ուսումնարան, որ գտնուում էր
Ծրէնֆորդի մօտ, ուր բնակում էր Դրում-
մօնդը։ Կա բաժանուեց իւր բարերարից, նրա
ամուսնուց եւ փոքրիկ Այսայից, որին սըր-
տանց սիրումէր նրա քաղցր եւ բարի բնու-
թեան համար եւ ուզարկեց ուսումնարան,
ուր մի բանի տարի շարունակ պէտք է ստա-
նար գանազան գիտութիւններ։

Վոաջին անգամ մտնելով դասատունը
Յակովբին պատահեց վերատեսուչ Դրօնը։
Սա մի քանի խրատներ տուաւ Յակովբին եւ
նրա սկզբնական կարդալ ու գրելու համար
յանձնեց իւր օգնական վարժապետին, որի
անունը Քնափ էր, Դրօնը մի շատ անսսվոր,
ծիծաղաշարժ կերպարանք ունէր. նրա քիթը
մանաւանդ շատ երկայն էր։ Ինցի սրանից
երբեմն նա չափազանց ցրուած էր լինում և
աշակերտները շատ անգամ օգտուելով վերա
տեսչի այս տկարութեամբը, երբ նա դասի
ժամանակ ուրիշ բաների վերայ մտածմանց
մէջ էր լնկնում, նրանք փոխանակ պարապ-

Ճունքի սկսում էին զանազան չարութիւններ: Զնայելով սրան Դաօծը այնու ամենային շատ գիտուն և փորձառու դաստիարակ էր. նրա սրտի բարութիւնը այնքան շատ էր, որ իւրաքանչեւր մանուկ կարող էր նրա ուշագրութիւնը դրաւել:

Ա՞ք շուտով կտեսնենք, որ ինչպէս Յակովը փոքր առ փոքր Դաօծի սիրելին դարձաւ: Քնափը, որի տեսչութեան յանձնեց Դաօծը Յակովըն, մի շատ խորամանկ և շար մարդ էր, որ և շուտով թափեց Յակովը դիմին: Մի անգամ Քնափը կանչեց տախտակի մօտ և գրեց այնտեղ ։ գիրը և հարցրուց Յակովըն. այս ի՞նչ է: Յակովը նայեց այս գրի վերայ, բայց գեռ չհասկանալով նրա նշանակութիւնը լուեց. վերջանդէն մտաբերելով, որ նրա հայրը գործ էր ածում սրան մի կէս ման ցորենի համար, Յակովը պատասխանեց կէս ման է սա:

— Ի՞նչ, բացագանչեց Քնափը, կէս ման: Դու ինչպէս երկումէ ինքդ կիսայիմար ես. այս նշանը ։ տառն է:

— Ո՞չ սա կէս ման է, իմ հայրս շատ անգամ ասում էր:

— Ուրիշմ քո հայրդ էլ այնքան յիմար էր, ինչքան և կո՞ւ, գո՞ւաց Քնափը:

— Ո՞ւ նա ամենեին յիմար չէր, ասաց Յակովը. նա իմանում էր, որ սա կէս ման է. հէնց ես էլ իմանում չեմ, որ ասում եմ: Տախտակի վերայ գրածը նշանակում է կէս ման:

Որչափ սառն էր խօսում Յակովը. այնքան աւելի էր տաքանում Քնափը. վերջապէս նա խիեց Յակովըն և ուղարկեց Դաօծի մօտ: Այս սկսաւ մեր մանուկին բացատրել, որ ուսումնարանումը նա պարտաւոր է հնագանդուիլ և գլխաւորը հաւատալ ամեն բանի, ինչ որ ասումէ վարժապետը: Յակովը հանդարտուեց և սկսեց եռանդով ուսանիլ:

Երբ որ Յակովը ապրում էր իւր հօր հետ ամենեին կոշիկ և գուլպայ չ'էր հագնում: Ծայց երբ նա գնաց ուսումնարան, նրան հագցրած էին ստնամաններ և հրամայած էին, որ ցերեկը չհանի: Ծայց կոշիկները սաստիկ յուփ էին տալիս Յակովը ուսները, վասնորոյ մէկ անգամ դասի ժամանակ երեխան հանեց և գրաւ մեջանի տակ իւր առաջին: Այս որ տեսան նրա չար ընկերները, իսկոյն հեռացրին Յակովը հեռու և ճարպիկ աշակերտներից մէկը նորամանկութեամբ կոխեց մէկ կոշիկը Դաօծի գրպանը (Սէբէն), իսկ միւսը Քնափի: Յակովը նկատեց այս բանը. բայց մէկ խօսք

Էլ չասաց, մինչև աշակերտների գուրս
գալը և ուսումը վերջանալը, այնպէս որ
մնացին միայն նա և վարժապետները: Դաօծը
այս տեսնելով հարցրուց նրանից:

— Յակովը, ինչո՞ւ քո ընկերների հետ չես
գնում, հիմի հանգստութեան ժամանակ է
և դու կարող ես գնալ խաղալ:

— Ոչ պատասխանեց Յակովը, չեմ կարող:
— Ի՞նչո՞ւ:

— Որովհետեւ ես կոշիկներ չ'ունիմ:

— Ի՞նչպէ՞ս թէ կոշիկներ չ'ունիս, քո կոշիկ-
ներդ ի՞նչ եղան:

— Մէկը ցցուած է ձեր գրպանից և միւսը
նրա գրպանից, ասաց Յակովը ցոյց տալով
Քնափի վերայ:

Դաօծը և Քնափի ձեռները տարին գըր-
պանները և մի մի կոշիկ դառան: Դաօծը զար-
մացած հարցրուց Յակովից:

— Արանք ինչպէ՞ս լնկան գրպանը, պատմի՛ր
ինձ Յակովը:

— Ե, յն չէկ ու երեսը պուա-պուտ տղէն,
որ նստած էր ահա այն գրասեղանի վերայ
այդ նա է դրել ձեր գրպանը:


Դաօծը անբաւականութեամբ շարժեց
գլուխը և հրամայեց Քնափին բոլոր աշա-
կերտներին կանչել: Հրամանը իսկոյն կատա-
րուեց: Դաօծը դարձաւ Յակովին և ասաց:

— Նիմի ասա ինձ Յակովը ով մեղաւորը:
Յակովը ցոյց տուաւ մի մաղերով տղի
Բառնաբաս անունով: Վաս ուրանամ էր,
բայց որովհետեւ Յակովի կոշիկների կապիճ-
ները արդէն վեր էր առել և կապել իւր
կոշիկներին. ապա բոլորովին մեղագրուեց և
սաստիկ պատմուեց. իսկ Յակովը հանգիստ
ու հանդարտ կոշիկներն էր հագնում:

Երբ որ պատմիժը վերջացաւ և վարժա-
պետները հեռացան Բառնաբասը բարկացած
մօտիկացաւ Յակովին: մօտիկացրաւ նրա
երեսին բուռնը (Խամբառը) և կանչեց սաստիկ:

— Ապասիր դու . . . հէնց մէկ գուրս եկ
ուսումնաբանի սրահը անիրաւ կ'տեսնես ես
քեզ ինչպէս կ'ծեծեմ:

Յակովը բոլորովին անշարժ էր և հան-
գիստ, որովհետեւ մի մեղաւորութիւն չ'էր
նկատում իւր մէջ՝ նա մինչեւ անգամ կամե-
նում էր հանգստացնել բարկացած մանուկին:
Ա ասնորոյ միսիթարում էր նրան այսպիսի
խօսքերով: „մի յուսահատուիր, լացով վէր-
քը չ'ես առողջացնիլ միթէ՞ քեզ շատ ծե-
ծեցին:“ Բառնաբասը բարկութեամբ լիքը
կարծեց թէ Յակովը, որի պատճառաւ
իրան ծեծեցին կամնում է նրան ծաղրել.
ուստի քիչ էր մնացել որ գուար իւր
բարկութիւնից:



— „Ո՞ի յաւսահատուիր, ասաց կրկին Յա-
կովը, կաղացուի, ալիւր կ'դառնայ: „

Կա, գեա աշխատում էր հանգստացնել
իւր բարկացած ընկերոջ, բայց սա նրա բո-
լոր խօսքերը կարծում էր ծաղրաբանութիւն,
յուփ տուաւ բուռը, դուրս եկաւ սրահը, և
կանչեց Յակովըին, որ նա գայ նրա ետեից:
Յակովը չէր վախենում սպառնալիքներից
և ճշմարիտ եթէ ասենք նա իսկի չգիտէր
թէ ինչ է ուզում նրանից Բառնաբասը: Եւ
որովհետեւ նա էլ գործ չունէր ուսումնարա-
նում, գնաց իւր հակառակորդի յեանից: Ո՞ի
բոպէում նրան ըջապատեցին շատ երախայք
զանազան ձայներով և գոտոցներով: Եմենից
առաջ մօտիկացաւ Բառնաբասը և սաստիկ
կանչեց:

— Գուրս եկ ջրի մուկ, դուրս եկ անիրաւ,
ես հիմի քեզ այնպէս կ'ծեծեմ, որ ամբողջ
ամիս չմոռանաս. հը դուրս եկ ասումեմ
քեզ... Ո՞իւս տղաներն էլ սկսեցին կանչել
եւ անսւանում էին Յակովըին երկչոտ, վախ-
կոտ, ստիպելով, որ կառէ Բառնաբասի հետ
մուշիով (բուռնով):

Ը փոթուելով այս աղմուկով Յակովը
այնու ամենայնիւ մտաբերեց առաջը թէ
„մի յուսահատուիր“ և դառնալով Բառնա-
բասին ասաց նրան հանգարտ կերպով:

— Բարեկամ, զէ քեզ լաւ կարգին ծեծեցին
և առ այժմ քեզ բաւական է. էլ ինչես
ուզում: Ես կու չեմ սիրում. բայց եթէ
դու անպատճառ ստիպում ես, զգուշացի՛ր.
գիտես ինձ էլ մուշտիներ ունիմ:

Այս խելօք խօսքերը փոխանակ Բառ-
նաբասին հանգարտացնելու նրան չարացրին
աւելի ու աւելի: Կա հանեց իւր վերարկուն
և պարասուեց յարձակուելու Յակովըի
վերայ:

Յակովը տեսնելով այս բանը և հաս-
կանարով, որ էլ հնար չկայ կռուից աղաս
մնալու, չետեւց իւր ընկերի օրինակին և
թշնամիները յարձակուեցին միմիանց վերայ:

Բառնաբասը աւելի մեծ էր, ուժեղ եւ
բարձր՝ Յակովից եւ լաւ իմանում էր
մուշիով կոիւ անելը, որովհետեւ շատ
վարժուած էր. բայց Յակովը հանգիստ էր
եւ զգոյշ շատ հաստատամիտ եւ պինգ,
որոնք փոխանակում էին նրան անփորձ եւ
անչմուտ լինելը:

Կոիւը սկսուեց նրանով, որ Բառնաբասը
իւր ձեռը ձգեց աղիղ Յակովըին, ինչաէս
որ ընդունուած է Վագիայում մուշտիով
կոււելու ժամանակ: Յակովը կարծեց թէ
Բառնաբասը կամենում է հաշոտիլ, բռնեց նրա
ձգած ձեռը եւ քաղաքավարութեամբ յուփ

տուաւ: Ի՞այց հէնց այն րոպէին ստացաւ մի այնպիսի սաստիկ հարուած երեսին, որ երկու քայլյետ գնաց: Վ.յո խորամանկաթիւնը արդէն բարկացրաւ սաստիկ Յակովին: «Կա սաստիկապէս յարձակուեց Իառնաբասի վերայ, մի եւ նոյն ժամանակը իրան պաշտպանելով: Ծնայելով սրան նա մի քանի հարուած էլ ստացաւ եւ ընկաւ: Իառնաբասը վայր գձեց գետինը եւ յուփ տուաւ, այնպէս որ Յակովի քթից եւ բերանից սկսաւ արիւն գնալ: Ընկերներից մէկը նրա ականջին կամաց ասաց „մի յուսահատուիր” այս առածը կարծես մոռացուած էր ինեղձ մանուկի մտքից: բայց այն րոպէին նա նրան տուաւ քաջութիւն եւ ոյժ. նա վերկացաւ եւ կոիւը կրկին սկսուեց: Երկայն ժամանակ յաղթութիւնը չէր վճռում, վերջապէս Յակովը կրկին ընկաւ գետին:

— Կաղացուի, ալիւր կդառնայ, ասաց Յակովը. վերկացաւ եւ փոքր ինչ հանդարտուելուց յետոյ սկսեց կրկին կոռուիլ բայց այնպիսի հանդարտութեամբ եւ վստահութեամբ, որ վերջ՝ ի վերջոյ յաղթող հանդիսացաւ վայր գձելով երկայն Իառնաբասին եւ այն էլ այնպէս ուժով, որ նա չէր կարողանուեց վեր կենալ առանց ուրիշի օգնականութեան. ընկերները նրան տուն տարին

ձեռներից բռնած:

— Ա.յ, այ, հիմի ցոյց տուիր գու սրան, նա այդ չի մոռանալ, կանչեցին ուրախացած չորս կողմից նրա բարեկամները:

— Ինչ որ լինելու է, պէտք է լինի, ասաց Յակովը հագնելով իրա վերարկուն, սրբեց, մաքրեց և գնաց տուն:

Երբ որ պատահում էր, որ երկու աշակերտներ կոիւ էին անում Գօծը, պատճում էր երկուսին էլ: Ի՞այց այս անգամ իմանալով, որ Յակովը ստիպուած է կոիւ արել, վերատեսուչը կանոնից փոքր ինչ դուրս եկաւ եւ Յակովը ինչ չպատժեց: Ընդ հակառակ Յակովը իւր վստահ եւ ձշմարտասէր բնութեամբը գրաւեց ո՛չ թէ միայն ուսումնաբանի աշակերտներին գէպ՝ ի ինքը, այլ մինչեւ անգամ եւ Գօծին, այնպէս որ մուշտիով կերած ծեծը (չեօթան) շուտով մոռացաւ:



Գ. Լ. Ա. Խ. Խ. Ե. Բ. Բ. Ա. Բ. Դ.

Յակովի միւս ուրախութիւնները և տրտութիւնները ուսումնարանի մէջ:

Երբ որ առողջացան կապտուցները և ուղյները, որ աստացել էր կոռուի ժամանակ, Յակովը սկսեց առաւօտից մինչև երեկոյ ջանասիրութեամբ աշխատել կարդալ սովորել: Նրա ամեն նեղութիւններից մեծն այն էր, որ ինչպէս մեք տեսինք, մի քանի գրեթե նա տալիս էր զանազան նշանակութիւններ: Մէկ անգամ Քնափը, որ չէր սիրում Յակովին մինչև անգամ այն ժամանակն էլ երբ նա ջանասէր էր և ուշադիր, գրեց գրատախտակի վերայ մի քանի բառեր, որ Յակովը կապի: Երբ որ պատահում էր մի բառ, որ նշանակում էր առաջուայ իւր ծանօթ մի առարկայ նա, փոխանակ ասելու այն իսկ բառը, ասումէր, ինչ միտն էր դալիս: Վայս բանից Քնափի համարեա համբերութիւնը հատաւ, նա Յակովի այսպիսի վարմունքը անուանում էր յամառութիւն և վերջապէս տարաւ երեխային Պածի մօտ:

— Յակովը, Յակովը, ինչպէս քեզ ամօթ

է, ասաց ծերը լսելով Քնափի գանգատները: Կատի՞ր, ինչպէս հարկն է քեզ կատիպեմ ուղեղ կապել:

Պածը գրեց գրատախտակի վերայ շուն” բառը:

— Ինչպէս կամես դու սրան Յակովը, հարցրեց նա:

Յակովը կապեց „շուն...ն”: բայց միտքը բերելով շան սենեակը, որ գտնւումէր նրա հօր նաւի վերայ, պատասխանեց „շան սենեակ”:

Այդպէս չե, Յակովը, շարունակեց Պածը, „շուն” և էդպէս էլ պէտք է ասել շուն. Թէկուզ նա քո միտքը բերի շան սենեակը: Օգուշացիր և ուշադիր եղեր, եթէ չէ կպատճուիս:

— Իէ հիմի ասա՛, ինչպէս կ'կարդաս „գդակ” բառը:

Յակովը մտքումը կապեց „գդակ” բայց ասաց մորթէ գդակ: Կա երբ նաւի մէջ էր մորթի գդակ ունէր ծածկին:

Պածը բարկացաւ:

— Յակովը, Յակովը, ասաց նա կու իմ համբերութիւնս կ'հատես, եթէ ուշադիր չլինես, ինչպէս հարկն է: Եթէ գդակի փոխապէս կարդում ես մորթեայ գդակ, ապա ինչպէս կ'կարդաս „ձող”:

— Ձրիակ, ասաց Յակովը առանց մտածելու:

Դածը բարկութիւնից կարմրեց:

— Ճիմի սրան ինչպէս կ'կարդաս , „գաւաղան”,
հարցրուց նա բարկացած:

Յակովը բոլորովին ուղիղ պատասխանեց
„գաւաղան” որովհետև այս բառը ասելով
ո՞չ մեկ քան միտը չ'եկաւ. որ ասի:

— Ո՞չ Յակովը, քո եղանակի համեմատ, ասաց
Դածը, այս բառը պէտք է լինի — գաւա-
ղանի հարուած, ուրեմն դու կ'ստանաս նրան-
ցից մի քանիսը:

Յակովը սաստիկ պատժուեց. — „մի յու-
սահատուիր” մտածեց ինքն իրան Յակովը,
„կ'աղացուի ալեւր կ'գառնայ, լացով վէրքը
չես առողջացնիլ” միսիթարելով իւրեան այս-
պէս, նա պատճելու ժամանակ մի ծպտուն
էլ անգամ չհանեց: Արանից յետոյ բոլոր
նա իւր ջանքը գործ դրաւ յաղթելու իւր
վաս սովորութեանը և շուտ էլ կարողացաւ
յաղթելու:

Այսուհետև Յակովը սկսեց աւելի մեծ
եռանդով և ուշադրութեամբ աշխատել և
մեծ մեծ յառաջադիմութիւններ էր անում:
Աա այն քան աւելի յառաջացաւ իւր ըոլոր
ընկերներիցը, որ Դածը բոլորովին սիրեց
նրան, շատ անգամ կանչում էր իւր մօտ եւ
սովորեցնում էր այն բաները, որ ուսումնարա-

նում դաս չ'էին տալիս: Ենպատմելի ուրա,
խութեամբ Դածը նրան առաջ էր տանում և
մի քանի տարից յետ նրան հասցրաւ այն
աստիճանին, որ Յակովը լաւ իմանումէր
յունարէն և լատիններէն և հասկանում էր
հին հեղինակների գժուար գրուածքները
առանց գժուարութեան և առանց բառարանի:

Յակովը ամենեին չ'էր պարձենում իւր
գիտութիւններով և յառաջագիմութիւնով.
Բայց Դածի սաստիկ նրան սիրելը նախանձ
պատճառեց ո՞չ թէ միայն ուսումնարանի
աշակերտներին, այլ մինչև անգամ և նրա
վարժապետ Քնափի: Այս վարժապետը
չ'էր ամաչում ծածկաբար Յակովի թշնամի
(Բառանառութանկ) աշակերտի հետ զանազան
հնարքներ պտուելու, որ նրան զձեն վերա-
տեսչի աչքից: Որովհետև Յակովի թշնա-
միները չ'էին կարողանում բացարձակ կատա-
րելու իրանց շար խորհուրդները, սրա հա-
մար սկսեցին շատ զանազան որոգայթներ
(Բառանառութանկ) պատրաստել նրա համար:

Յակովը հին թշնամի Բառնաբասը գե-
ղեցիկ պատկերներ և նկարներ էր նկարում և
այս բանը յայտնի էր ուսումնարանում ամե-
նին, բաց ՚ի Դածից: Բառնաբասը ուզելով
ծիծալել Յակովի վերայ, նկարեց նրա մօր
մահը: Այդ պատկերը շատ հաւանելի թուց

Քնափին, սրա համար նա պահեց նրան
սեղանի արկղի մէջ (ստույ պահելի հէջ):
Այս բանը ոգեսրեց Բառնաբասին, նա
այնուհետև համարձակ շարունակել սկսեց
իւր պարապմունքը, զանազան պատկերներ
նկարեց Գօծի վերայ, զորօրինակ նկարու-
մէր նրան երկայն քթով և շատ ծիծաղա-
շարժ ու ծաղրական նշաններով: Այս բոլոր
պատկերները տալիս էր Քնափին կամ ինքը
Բառնաբասը կամ ուրիշ աշակերտների միջ-
նորդութեամբ: Քնափը շատ լաւ հասկա-
նում էր Բառնաբասի չար միտքը, և ժողո-
վումէր բոլիր պատկերները, ձայն ձգելով
թէ իրը Յակովին է նրանց նկարել: Եւ
մէկ լաւ միջոցի էր սպասում որ Յակովին
վնասի: Եւ յիրաւի շուտով պատահեց մի
յարմար անցք:

Մի երեկոյ Քնափը և Յակովը վերա-
տեսչ մօտ էին. յանկարծ քամին շնչելոյզից
հանգցրեց ճրագը: Ա երատեսուչը վերկա-
ցաւ, որ կրակ լերի. բայց մմութեան պատ-
ճառաւ կողաւ դռնին և ճակատը գիպաւ
շեմքին: Այս բանս, ի հարկէ, յայտնի էր
միայն Յակովին և Քնափին: Իայց Քնա-
փը պատմեց այս բանը Բառնաբասին և սա
միւս օրը արդէն նկարած պատրաստած էր
այս անցքը, որն որ նմանապէս տուաւ

Քնափին: Քնափը նրանից յետոյ աշխա-
տում էր մի հնարքով, մի միջոցով Գօծին
զարմացնելու, որ Յակովը շատ գեղեցիկ
պատկերներ է նկարում և զարմանալի շնորհք
ունի նկարչութեան: Գօծը շատ ուրա-
խացաւ լսելով իւր սիրելի աշակերտի հա-
մար մի այսպիսի ընդունակութիւն ունենալին
էլ և հէնց միենոյն օրը, երբ Քնափը նրան
ասաց, նա եկաւ Յակովի մօտ:

— Յակովը, ասաց նա, ես հոգով ուրախ
եմ, որ դու նկարչութեան շնորհք ունիս:

— Ես, պատասխանեց զարմացմամբ — ես
բոլոր կեանքս մի անգամ ձեռս առած չկամ
մատիս (հարանդաշ) նկարչութեան համար:

— Բաւական է, բաւական է, ասաց Գօծը:
Դու շատ համեստութիւնիցդ ուրանում ես
Ճշմարտութիւնը բայց այդ լաւ չէ: Այդ-
պիսի երկելի ձիրքը առանց ուշագրութեան
թողնել լաւ չէ: և ես բաւական կ'լինիմ
եթէ դու ինչքան կարողութիւն ունիս
լաւացնես և զարգացնես:

Այս ասելով Գօծը դուրս եկաւ:

Յակովը իւր վերատեսչին սիրելուց ճարեց
նկարչութեան համար հարկաւոր առարկաներ
և պարապում էր շատ եռանդով ու մեծ
ջանքով և վերջապէս այնքան յառաջ գնաց,
որ մէկ քանի պատկերները մինչև անգամ

արժանացտն Դիօծի գովասանքին և հաւանութեան:

Ո՞էկ անգամ Դիօծը մտիկ անելով նրա գեղցիկ նկարներից մէկին հարցրեց Քնափից „ինչու Յակովը առաջ չ'էր ուզում խոստովանութիլ, որ նա գիտում է այս առարկան: — Կարելի է և շատ հաւանական է, պատասխանեց Քնափը, շատ համեստութիւնից է և փոխեց խօսակցութիւնը:

Այս ժամանակ Բառոնաբասը հանեց Յակովը գրեից առաջին թերթը, ուրտեղ գրուած էր Յակովը անունը: Այս իսկ թղթի վերայ Բառնաբասը նկարել էր պատկերը Դիօծին և Յակովի անունի մօտ գրել մի բառ „նկարեց,, Եւ այսպէս նրանց շար խորհուրդներին ճանապարհ բացուեցաւ: Քնափը ունենալով այսպիսի ապացոյցներ (Յակովի մասին ասաց Դիօծին, որ նա շատ շատ անգամ ծաղըումէ վերատեսչին և բաւականին պատկերներ ունի նկարած նրա վերայ: Օքրմացած վերատեսուչը սաստիկ տրտմեց, սրա համար ասաց Քնափին, որ բոլոր ուսումնաբանի առաջ դատապարտի Յակովին:

Յակովը չ'էր կասկածում անգամ, թէ այսպիսի որոտմունքներ է պատրաստուած նրա գլխին, սրա համար յօժարութեամբ

գնաց ուսումնաբանի մեծ սենեակը (Պահլիմ), ինչպէս սովոր էր միշտ: Երբոր բոլոր աշակերտները ժողովուեցին, մասւ Դիօծը և նրա ետքից Քնափը, իբր թէ տրտմած: Իշակերտները բոլորը լուս էին և մի վատ բան էին նախագուշակում, բայց ո՛չ մէկը այնքան հանգիստ չ'էր, ինչպէս Յակովը, որն որ ամենեին չ'էր էլ մտածում, թէ մեղք կ'ունենայ:

Ո՞ի հպարտ հայեացքով նայելով բոլոր աշակերտների վերայ Դիօծը տխուր և շփոթուած ձայնով, դուրս կանչեց Յակովին: — Յակովը, սկսեց Դիօծը, իմ սիրու շատ ցաւումէ, որ դու պատկերներ ես նկարել ինձ վերայ, որ քո բարեկամդ եմ և վարժապետդ. ես միշտ հոգացել եմ քո ապագադ երջանկացնելու: Եթէ մի այդպէս բան արած լինէր միւս աշակերտներից մէկը, այն ժամանակ ես նրան կ'անուանէի շարահոգի և անբարոյական: Խայց յանցաւորը երեսում ես դու, որի համար ես հոգացել եմ ո՛չ թէ եբրև աշակերտի, այլ ինչպէս իմ հարազատ որդուս համար: Սա ցոյց է տալիս քո ամօթալի խանգարուած լինելը և ապացոյց է քո ապերախտութեան: Ամ... պատասխանիր, Յակովը, յանցաւոր ե՞ս դու թէ չէ, Յակովը հազիւ թէ իրան չ'որցրաւ,

լսելով՝ այս դատապարտութիւնները. բայց
իմանալով իւր անմեղութիւնը, նա ժողովեց
բոլոր ոյժը և պատասխանեց բարձրաձայն,
,,ես մեղաւոր չեմ” այն ժամանակ Քնափը
տուաւ Դաօծին իւր պահած պատկերները և
ասաց. „Յակովը Լյոլիսի անպիտանութիւնը
չափ ու սահման չ'ունի. նայեցէ՛ք այս պատ-
կերներին և գուք ինքներդ գատեցէ՛ք, թէ
ինչքան ճշմարիտ են իմ խօսքերը: Դուք
տեսնումեք դրանք բոլորը մէկ մարդի ձեռն
է և մէկ խելքի գործ. Դաօծը սկսեց նայիլ
պատկերի վերայ. Քնափը, նրա աւելի ուշը
դարձնելով մի պատկերի վերայ ասաց. ահա
ապացոյց նրան, որ բացի Յակովից ո՛չ
մէկը չ' կարելի որ նկարած լինի: Դուք
՚ի հարկէ մոռացած չ'էք, որ բաց ՚ի ինձնից
և այս անշնորհակալ մանուկից ո՛չ մէկը չ'կար
Ձեր սենեակում, երբ որ հանգաւ ճրագը և
դուք երբ գնում էիք կրակ բերելու, կպցը-
րիք ձեր ճակատը դռնին: Ե՞ս հանգամանքը
ոչ մէկին չ' կարելի, որ յայտնի լինի, բաց
՚ի Յակովից, որն որ նկարել է ահա այս
թղթիս վերայ. Այս երատեսուչը մտիկ
արաւ պատկերի վերայ և գլուխը շարժեց
իսկ Քնափը շարունակեց.” Ե՞ս առաւել
լաւ ապացոյց Լյոլիսի մեղաւորութեան ահա
կարող է լինել այս թուղթը, որի վերայ

ինքը Լյոլիսը ստորագրուած է: Նոց որ
առւին ինձ այս անպիտան ծաղթաբանութիւնը,
և իմացայ նրա շարադրողին- նայեցէ՛ք այս
թուղթը, ինչպէս յարմար գալիս է Լյոլիսի
գրքին: Դաօծը արտմութեամբ լքցուած շար-
ժեց գլուխը և ասաց:
—Ես տեսնում եմ, պարո՞ն Քնա՛փ, որ գուք
Ճշմարիտ էք և շատ տրտմած եմ ես այս
բաներիս վերայ: Ես շնորհակալ եմ ձեզնից
ձեր աշխատութեան համար, որ գուք ինձ
ցոյց տուիք օձի զաւակին, որին ես տաքաց-
նում էի իմ կուրծքի վերայ: Յակովը գու
կ'պատժուիս. կանչեցէ՛ք ծառային, նրան
մէկ լաւ ծեծի: Իոլոր այս ժամանակը
Յակովիը անշարժ կանգնած էր, ինչպէս
քարացած, մի բառ չգուստ եկաւ նրա շըթունք-
ներից: Երա սարսափեց այն սաստիկ
ատելութիւնից, որ ունեցան նրա վերայ.
բայց լսելով որ նրան ուզումեն պատժել
նա յօտիկացաւ վերատեսչին և վատահ այ-
սինքն համարձակ խօսքերով, որոց մէջ փայ-
լումէր ճշմարտութիւն և անմեղութիւն,
կամաց ասաց:

—Միթմէ՞ ինձ կ'պատժեն առանց լսելու իմ
Ճշմարտութեանս:
—Ո՛չ պատասխանեց վերատեսուչը—այդ
անիրաւութիւն կ'լինէր. բայց ինչպէս ես

կամենում, դու անշնորհակա՛լ, ճշմարտուիլ
անհերքելի ապացոյցների հակառակ:

Յակովը խնդրեց որ տան նրան բոլոր
պատկերները. լուս ու մունջ նայեց նրանց
վերայ և աւելի սարսափեց, երբ որ տեսաւ,
որ ինչպէս խորածանկութեամբ նրան բան-
բասանաց տակ էին գձել: Ինյաց քաջալերու-
եցաւ իսկոյն և իմացաւ, որ այս բոլոր
պատկերները նրա թշնամի ինառնաբասի
դործն է, վասն որոյ իսկոյն ասաց:

— Եւյս պատկերները նկարել է ինառնաբասը,
այլ ո՛չ թէ ես. նա է մեղաւորը, իսկ ես
չեմ իմանում և չէի ցանկանալ անդամ
այդպիսի ծաղբաբանութիւններ:

— Յակովը, ասաց վերատեսուչը, ինչպէս
հեշտութեամբ ես առաջ քեզ հաւատում էի,
այժմ չեմ հաւատում, ես միտու եմ բերում
որ դու մի անզամ արդէն ինձ խարել ես,
հաստատելով՝ որ դու նկարել չես իմանում:
Աս քեզ ապացոյց:

— Եւ այն ժամանակ էլ ես ճշմարիտ էի,
ինչպէս հիմի, պատասխանեց Յակովը...
այն ժամանակ ճշմարիտ ես նկարել չէի
իմանում և սկսեցի սովորել, երբ որ դուք
ցանկացաք. Խնդրում եմ հարցրէ՛ք պարոն
Քնափին, երբ է ստացել նա այս պատկեր-
ները:

Դածը կատարեց Յակովը ցանկութիւնը և
պատասխան ստացաւ, որ պատկերները տու-
ել են կրան զանազան աշակերտները, որոնց
անունները տուաւ Քնափը, հաստատեցին
վարժապետի ասածը:

Իառնաբասը ամենակին ձեզ այդպէս նկար
չէ տուել հարցրուց Յակովը Քնափից:
— Ո՞չ մէկ ժամանակ — համարձակ պատաս-
խանեց Քնափը: Եւսպիսի աշկարա ստու-
դիւնից Յակովը սփռնեց. բայց կրկին ժո-
ղովեց իրան և հարցրուց.

— Զապա ինչո՞ւ ամբողջ ամիս նրանց ծածկում
էր, որի մէջ հիմի ինձ են դատապարտում:
Ինչո՞ւ պարոն Քնափը առաջ չէ ցոյց տու-
ել պատկերները:

Լսելով այս խելօք հարցը Դածը գարձաւ
Քնափին և հարցրաւ դրա պատճառը:

— Ո՞իսյն նրա համար, որ աւելի շատ ու-
նենամ ապացոյցներ, անամօթաբար պատաս-
խանեց Քնափը:

Յակովը մի րոպէ մտածեց, իսկ յետոյ
կրկին դարձաւ վերաաեսչին:

— Ո՞վ է հանել իմ գրքիս թուղթը ես չեմ
իմանում և չեմ էլ աշխատում իմանալ: Ո՞ի-
սյն իմանում եմ և հաստատում եմ, որ ես
նրա վերան ամենակին պատկեր նկարած չկամ
և չեմ էլ ստորագրել „նկարեց”. նա, ով

արել է, թող նրա խիզճը նրան պատճի.
բայց ասացէք ինձ, լսել էք դուք, որ ես
վատ խօսէի իմ մօր վերայ երր և իցէ:
— Ո՞չ, ասաց Գրօծը. դու ինձ միշտ երեա-
ացել ես քաջաքավարի տղայ և որդի:
— Ուրեմն Շարսեղը կ'ասի. նա ասաց ինձ
թէ Շառնաբասը նկարել է պատկեր իմ
մօր մահուան վերայ:

Հարցրին իսկոյն Շարսեղից, որ պատաս-
խանեց Ճշմարիտը:

Եթէ, բացականչեց Յակովը, որն որ
ներքին ուրախութիւնից լքցուեցաւ արտասու-
քով. եթէ գուք հաւատացիք, որ այն պատ-
կերը, որ նկարուած է ձեր վերայ որին այն-
պէս սիրում էմ, 'ի հարկէ չէք հաւատալ,
որ սա գոնէ իմ ձեռիս գործն է:

Վ.յս խօսքերով Յակովը տուաւ վերա-
տեսչին իւր մօր մահուան վերայ նկարը:
Յակովի բազդից Քնափը մոռացած էր
գուրս հանել այս պատկերը և նա գտնուում
էր միւս նկարների հետ. Քնափը սփռնեց,
իսկ զարմացած վերատեսուչը հարցրաւ
Քնափին:

— Ումնից էք ստացել այս նկարը:

Քնափը բոլորովին իրան կորցրած պա-
տասխանեց:

— Շառնաբասը:

Որանից յետոյ Յակովը ճշմարտութիւնը
աշկարայ և անկառածելի դարձաւ:
— Աապա՞ , ինչպէ՞ս էիք դուք ինձ ասում
թէ ոչինչ չէք ստացել Շառնաբասից. ինչ-
պէ՞ս պէտք է սա բացատրել. Դուք ինք-
ներդ ձեղ հակառակում էք: Նիմի ես տես-
նում եմ, որ բոլոր պատկերներն էլ նկարել է
նա, ով որ նկարել է Յակովի մօր մահը,
նրանք բոլորը, ինչպէս մտքով, այնպէս և
ձեւրով, բոլորովին միմիանցնման են. Որով-
հետեւ Յակովը չի նկարել իւր մօր մահը,
ուրեմն մնացածներն էլ նրա գործը չ'են.
Յակովը անմեղ է, սրանում կասկած չ'կայ:

Եետոյ գառնալով Շառնաբասին Գրօծը
ասաց:

— Խսոստովանի՛ր Շառնաբաս'ս, դու ե՞ս նկա-
րել Յակովի մօրը, Գո՞ւ ես տուել այս
պատկերը պարոն Քնափին. Հը՝ պատաս-
խանի՛ր բայց մտիկ արա՝ մի խարի՛ր:

Շառնաբասի երեսի գոյնը իսկոյն փո-
խուեց. կամ կարմրում էր կամ սփռնում և
վերջապէս կզկզալով խօստովանեց Ճշմար-
տութիւնը: Վ.յուհետեւ խօսեցին և բոլոր
աշակերտները և մեկ քանի բոպէում Յա-
կովի անմեղութիւնը աշկարայ դարձան, ինչ-
պէս և Շառնաբասի ու Քնափի չար խոր-
հուրգները եւ որոգայթները:

Դաօծը սեղմեց կուրծքին հծկտացող
Յակովին եւ քաղցրութեամբ նրան գդուեց.
իսկ յետոյ գարձաւ դէպ 'ի Բառնաբասը եւ
Քնափը:

Բարկութեամբ և անհանգստութեամբ
լիքը նա հազար նախատինքներ նրանց ասաց
և բանը նրանով վերջացաւ, որ Բառնաբասին
պատժեցին եւ գուրս արին ուսումնարանից,
իսկ Քնափին առանց ուշացնելու հրաժա-
րեցին ուսուցչական պաշտօնից...

Գ Լ Ո Խ Զ Ա Ր Բ Ա Ր Գ

Յակովի նաւազէ գառնսւմ այ-
սինքն պաշտօնեայ նաւի վերայ:

Երբ որ Յակովի 14 տարին հասաւ եւ
վերջացրաւ ուսումնարանի կրթութիւնը, Յա-
կովիը պէտք է իւր համար մէկ պարապ-
մունք ընտրէր: Չնայելով նրա շատ հիմնա-
ւոր սովորած գիտութիւններին, որ կարող
էին նրան բաւականին լաւ աստիճանի հասց-
նել, նա կամեցաւ նաւավար գառնաւ թէմ-
զայի վերայ, որի վերայ ծնուել էր, հասակ
էր առել եւ որը միշտ մտաբերում էր մէ
ուրախութեամբ: 'Ի զուր գարձան վերա-
տեսչի բոլոր ջանքը, որ Յակովին թողնի
այս մտագրութիւնը եւ ուրիշ ճանապարհ

վեր առնի իւր համար:

— Ուէկեւ նաւարարի պաշտօնը շատ ճշմարիտ
եւ արդարացի է, բայց դու կարող էիր
աւելի լաւ եւ օգտակար ճանապարհ վեր
առնել քեզ համար:

Յակովի միշտ իւր մանկութեան հին
յիշողութիւնները նրա մէջ մի այնպիսի սաս-
տիկ ցանկութիւն վառեցին զառնալ թէմ-
զան, որ նա յամառութեամբ կանգնեց իւր
ասածի վերայ: Բարեկամական գգուանքնե-
րով վերջապէս թողաւ նա իւր բարերար եւ
վերատեսուչ Դաօծին եւ գարձաւ Դրումնդի
մօտ, որ խոստացաւ նրան նաւազ ընդունել
իւր նաւերից մէկի վերայ: (Նաևառ նշանակու-
մէ պաշտօնեայ նաւի վերայ): Դրումնդը,
նրա կինը եւ փօքրիկ Առոան ուրախութեամբ
ընդունեցին Յակովին եւ նա մնաց սրանց
տանը գեռ մի քանի օր: Դրումնդն էլ նոյն-
պէս խորհուրդ չէր տալիս մտնել նաւը,
ցոյց տալով նրան աւելի լաւ ճանապարհներ:
Նյուու ամենայնիւ Յակովը հաստատ էր
իւր վճռողութեան մէջ եւ Դրումնդը ակա-
մայ պէտք է կատարէր նրա ցանկութիւնը:
Յակովը գրուեցաւ նաւազ եւ գնաց Դրու-
մնդի մի նաւը, որի նաւավարը անուան-
ումէր Արարաւը. Յակովը, մինչեւ որ ստա-
նար նաւավարութեան պաշտօն, դեռ պէտք

Է վեց տարի նաւազութիւն անէր, զանազան նեղութիւններ կրելով եւ վտանգների ու փորձանքի ընկնելով։ Վկիզբը նայելով Յակովի ապագան պէտք է լաւ չլինէր։ Իսյց „աղատին աղատութիւն, արդարին արքայութիւն”, Յակովի հասաւ նրան, ինչ որ ցանկանում էր եւ ներկայով գեռ բազգաւոր էր կարծում իրան։

Խոկ յետոյ մշածում էր նա, տեսնենք Եստուած ինչ կ'տայ։ Դրումմօնդը սաստիկ պատուիրեց Մարաբին, որ երբէք Յակովին չեփի եւ վաս վարվեցողութիւն չ'անէ նրա հետ։ Երբ որ Յակովի եկաւ Պոլլին (նույն անունը այդպէս էր), նախ եւ յառաջ ուշադրութեամբ սկսաւ մտիկ անել նաւի չորս կողմը, նրա շինուածքը եւ միջին բնակարանները, որովհետեւ նաւը պէտք է լինէր նրա այնուհետեւ բնակարաններ, առաջ նրան շատ լաւ թուեցաւ, բայց չ'կարողաւ մտնելու եւ նաւասնեակը, որովհետեւ գուռը փակուած էր։ Մարաբը ցցյց տուաւ Յակովին նրա հանգստարանը եւ Յակովի, յարմար միջոց գտնելով, ինդրեց Մարաբից թողնել նրան տեսնել նաւասնեակը։

—Կարելի չէ, կնճռոտելով ասաց Մարաբը եւ մի մթութիւն պատեց նրա երեսին,

մինչդեռ մինչեւ այն ժամանակ այնքան քաղցը էր եւ հաճելի եւ յետոյ ասաց—ինձ մօտ չ' նաւասնեակի բանալիքը, օգնականիս մօտ է։

—Օգնականի մօտ է։ Հարցրեց զարմացած Յակովի Ամիթէ Չեղ օգնական էլ ունիք կամ ինչպէս է նա համարձակուել առնելու բանալին։ Դուք էք տէրը.

—Արիշ անգամ քեզ կ'բացատրեմ—ասաց Մարաբը։

Յակովի սրանից ելլրակացրեց, որ նաւալարը չ' կամենում աւելի խօսելու իւր օգնականի համար... շուտով սրանից յետոյ Մարաբը գնաց ափ։ Եւ Յակովին մենակ թողեց նաւի վերայ։ Եւյս ժամանակ նասկսեց մտածել և քննել նաւի վերայ այսպիսի անսովոր բաները, առաւել նրան զարմացնում էր, այն, որ Մարաբը օգնական ունէր առաջին՝ նրա համար, որ Դրումմօնդը սրա համար ոչինչ նրան ասած չ'էր. և երկրորդ՝ Յակովի մտարերութիւր մանկական յիշողաթիւններից, որ նաւի վերայ շատ բաւականին է մի նաւալար և պաշտնեայ, վասն որոյ նա մտքումը գրեց, „որչափ կարելի է լաւ կ'նայեմ և քննեմ ամենայն բանը և եթէ մէկ կասկածանաց բան տեսնեմ, իսկոյն կ'հաղորդեմ Դրումմօնդին։”

Վ.յու միտքը բոլորովին հանգարատացրաւ
Յակովին, այնպէս որ առաջին զիշերը նա
շատ սաստիկ քննեց մինչև առաւօտը: Միւս
առաւօտը վաղ Մարաբը յետ դարձաւ նաւը
մի մարդի հետ, որի կերպարանքից կարելի
էր ասել կ'լինէր մինչև 30 տարեկան: Կարա
զաղըալի կերպարանքից Յակովի գուշակեց,
որ դա է Մարաբի օգնականը: Կա ուշա-
գրութեամբ նայեց Յակովի վերայ ոտից
գլուխ և ինչպէս երեւումէր նրանից լաւ
բան, լաւ հետեանք սպասել չէր կարելի:
Վ.յու ամենայնիւ Յակովի ըջուսահատուեց
և քաղաքավարութեամբ գլուխ տուաւ.
Երբ որ Մարաբը նրան բերաւ Յակովի
ծօտ և ասաց, որ սա է իւր օգնականը Ֆլէմ-
փինդ անունով:

Ֆլէմփինդը պինդ պինդ նայելով Յակովի
վերայ ասաց:

— Լոի՛ր, պատանի, զու մեղ հետ նաւելու
ես, առաջին անգամ ես քեզ խորհուրդ եմ
տալիս լոել ամենայն բանի վերայ, ինչ որ
կ'տեսնես: Խոկ եթէ չէ, կ'համարձակուիս
շատ խօսելու, գեռ յետ նայել չես կարող
չօի մեջ կ'լինիս արդէն:

Յակովի մտածեց, „մի յուսահատուիր”
և ասաց: — Ես կարծեմ, որ այս նաւի վերայ
գլխաւորը Մարաբը է, ուրեմն գուք ինձ

չէ՛ք կարող տալ խորհուրդներ: — Դու
այդպէս ե՞ս մտածում, ասաց ծիծա-
գալով Ֆլէմփինդը. պատանի զու լողալ
գիտում ե՞ս:

Ու պատասխանեց Յակովի, չեմ գի-
տում, բայց կարող եմ սովորել:
— Ուրեմն խորհուրդ եմ տալիս քեզ բարե-
կամաբար շուտով սովորել. ես կարծեմ որ
զու շուտով Ծակմղայումը կ'լինիս: տես,
զգուշացի՞ր:

Վ.յու բանը շատ բարկացրաւ երեխային.
Եթէ այդպէս է, ասաց նա շփոթուած,
ապա ես հիմակ ու հիմակ կ'գնամ ափը և
կ'պատմեմ Դրումմօնդին, որ դուք չար նպա-
տակով բաներ էք անում. Թող նա գոնէ
իմանայ, որ եթէ ես նաւում չգտնուիմ,
ուրաեղ պէտք է ինձ պարտէ:

Լոելով այս հօսքերը Ֆլէմփինդը իս-
կոյն փոխեց խօսակցութեան եղանակը, և
եւր բոլոր սպառնալիքները կատակի (Հանոտի)
շուռ տուաւ. հաւատացնելով, որ կամենում
էր միայն Յակովին փորձի, նա անվախ է
թէ ո՛չ Ալբանից յետոյ նա հեռացաւ նրանից
և Մարաբին վեր առնելով հետը նաւի
միւս կողմը խօսեց նրա հետ, ինչպէս երե-
ւումէր շատ մեծ գործի համար: Կարանք-
այնպէս կամաց էին խօսում, որ Յակովիը

Հկարողացաւ մի բառ՝ անգամ թոցնելու
նրանց փախողից: 'Յա միիթարում էր առա-
ծով թէ ..հզօրներին Վասուած օգնական է'
բայց վճռեց մի և նոյն ժամանակն էլ որ
ինչպէս կարելի է զգոյշ լինի ամենայն
բանում:

Վիւս առաւօտեան արդէն նա սկսեց
լողալ սովորել և այնպէս եռանդով ու
չանքով կաւ այս գործին, որ մի քանի
շաբաթում հասաւ բոլորովին իւր նպատակին:

Ե՞ի ամսաշափ նաւը կանգնած էր խա-
րսիսի վերայ, մինչև որ Գրումմօնդը հրա-
ման տուաւ տանել աղիւսները (սէտինները)
Շիրնես (տէղի անունն է):

Ե՞ի գեղեցիկ առաւօտ բոլորովին բեռ-
նաւորուած նաւը հանեց խարսիսը և սկսաւ
լողալ ջրի հոսանքով: Վարարլը եկաւ Յա-
կովի մօտ, որ ցայց տայ նրան, թէ ինչպէս
պէտք է կառաւարել նաւը. բայց Յակովը
նրան հաւատացնում էր, որ լու գիտում
է բոլոր կանոնները և լաւ ծանօթ է գետի
հետ: Վարարլը միամտուելով գնաց նաւա-
սենեակը, ուրտեղ Գլէմմինդը նախաձաշիկ
էր պատրաստում, իսկ Յակովը մնաց զեկի
մօտ, և շուռ էր տալիս նրան կամ աջ կամ
ձախ, առանց նաւավարի օգնականութեան:

'Յա անց էր կացած արդէն կամուրջը,

ձանձալ տեղերը և բաւականին հեռացել էր.
բայց Ուար ոբլը և Գլէմմինդը չէին մտա-
ծում անգամ գուրս գալ տախտակամածը,
նայելու թէ նաւը ինչ դրութեան մէջ է:

Ա երջապէս Գլէմմինդը գուրս եկաւ
սանդուխքներով տախտակամածը և նայեց
շուրջը և ասաց:

— Ի՞նչպէս. միթէ՞ մեք արդէն անց ենք կա-
ցել Պուտնէյի կամուրջը և աւազուտ տե-
ղերը. այդ ինչպէ՞ս գու կառավարեցիր Յա-
կովը. ինչո՞ւ համար մեզ չկանչեցիր:

Յակովը պատասխանեց, որ արդէն 10 տա-
րեան հասակում նա սովորած է եղել զէկը
վարել իւր հօր նաւի վերայ և մինչև հիմակ
էլ այնպէս լու միտն են բոլոր երկիւղալի
տեղերը, որ ո՞չ մէկ բանի նաւը չի կցնիլ
և վնասիլ: Գլէմմինդը փոքրիկ ինչ լոեց և
յետոյ գառնալով Վարարլին, որ զուրս էր
դալիս նաւասենեակից, ասաց:

— Ես չ'եի կարծում, որ այս պատանեակը
այսպէս պէտք կ'գայ: Յետոյ հեռանալով
նրանք կրկին սկսեցին փափալ Յակովը
թէ կարողացաւ մի քանի խօսք լսելու,
բայց 'ի զուրս նա աշխատում էր հասկանալ
նրանց միտքը:

Ա երջապէս երբ որ Գլէմմինդը գնաց
նաւասենեակ Ուարարլը եկաւ Յակովը մօտ

և ասաց:

— Տուր ինձ զէկը, իսկ դու գնա՛ նախաճաշիկի: Յակովը կամենում էր մտնել սենեակը. բայց դեռ ոտքը չկոխած պատահեց Պլէմմինդը, որ նրան հրամայեց յետ գնալ: — Կաւասենեակ-դու չե՛ս համարձակուիլ մտնելու, գոռաց նա:

— Ի՞նչ պատճառաւ, ծաղրութեամբ հարցրուց Յակովը:

— Որովհետեւ ես չեմ կամենում. պատասխանեց նա. Հասկացիր միանդամից Յակովը, որ քեզ արգելուած է նաւասենեակ մտնել Իսկ եթէ կ'սենեմ քեզ այնտեղ ցերեկը թէ գիշերը, իմացիր, որ այնտեղից առողջ չես դուրս դալ: Ես կատակ չեմ անում. ուրեմն զգուշացիր. քո աեղդ տախտակամածն է, դու այնտեղ պէտք է նախաճաշիկ անես:

(Ձէկ Պլէմմինդը այս րոպէին շատ զարհուրելի և ահաելի կերպարանք ունէր, սակայն

Յակովը նրանից ամենեին չ'վախեցաւ միտքը բերելով այն առածը թէ „Հզօրներին Աստուած օգնական է” և յետոյ դարձաւ նա Պլէմմինդին ասաց:

— Եթէ Մարաբը ինձ արգելէր մտնել նաւասենեակը. ես կ'հնազանդուէի, բայց ինձ դուք էք հրամայում, որ իրաւունք չունիք բոլորովին և ես Զեզ հետ ամենեին

գործ չունիմ:

Խօսքը վերջացնելով նա կամենում էր հեռանալ բայց Պլէմմինդը բռնեց նրա ձեռքից և այնպէս սաստիկ յուփ տուաւ, որ Յակովը հազիւ չաղաղակեց ցաւից, „Ես քեզ ասում եմ, սիրելիս, ասաց նա, և դու շուտով ինքդ էլ կ'համոզուիս, որ այս նաւի գլխաւորը ես եմ: Մի մոռանար և սրանից զգոյշ կացի՞ր: Կարելի է ժամանակ կդայ, որ դու էլ իրաւունք կ'ունենաս մտնել նաւասենեակը, որ ինչպէս ես կարծում եմ շուտով էլ լինելու է. բայց մինչեւ այն ժամանակը մէկ հատ բառ բերանիցդ չ'հանես, եթէ կեանքդ քեզ թանգ արժէ:.. Կա արձակեց Յակովը ձեռնը և պատասխանին չ'սպասելով, գնաց խորհրդաւոր նաւասենեակը: Կախաճաշիկը վերջացնելով Յակովը գնաց Մարաբի տեղը նստելու զեկի մօտ: Մարաբը փոքր ինչ շփոթուած էր երեւում եւ կարեկցութեամբ նայելով Յակովըին ասաց..., Ես խղճում եմ քեզ վերայ. բայց ախ... ափսոս ոչինչ անել չեմ կարող: Աստուած տայ, որ այս ամէն բաներին լաւ վերջ լինի. բայց շատ լաւ եղած կ'լինէր, եթէ դու այստեղ մտած չ'լինէիր:” Եւ ախուր հոգւով թողնելով Յակովըին մտածութեան մէջ գնաց ինքը Պլէմմինդի մօտ:

Հասկանալի է, որ այսպիսի բաները եւ առաւել Գիշմինդի կոպիտ վարվեցողութիւնը բարկացնում էին Յակովին եւ նրա սիրտը վշտացնում: Կա սկսու կասկածել, որ անպատճառ Արարալի եւ նրա սուտ օգնականի մէջ մի գաղտնիք կայ, որին շատ վախինում էին յայտնելու, որա համար էլ միշտ աշխատ և էր Յակովը, որ հասկանայ այս գաղտնիքը: Մեծ հետաքրքրութեամբ նայում էր նա նաւասինեակի գաների վերայ եւ վերջապէս վճռեց հաստատապէս, որ առաջին յարմար միջոցին մտնի նաւասինեակը եւ հասկանայ այդ գաղտնիքը: Այս միտքը նրան մի քանի ժամանակ հանգըստացրաւ եւ նա ուշադրութեամբ սկսու նայել բոլոր ափերը որոնց մօտերքով նրանք անց էին կենում: Յակովի հոգում եւ երեւակայութիւնում նկարում էին նրա մանկութեան յիշողութիւնները, նա ձանաչում էր ամեն մի գուրս ընկած հողը, ծառերի խմբերը, ափի վերայ տնակները եւ սրանք երեւում էին նրան իբրեւ նրա հին բարեկամները: Այսպիսով ժամանակը անց էր կենում աննկատելի եւ շուտ շուտ եւ Յակովը շատ զարմացաւ, երբ որ Արարալը ճաշից յետոյ գուրս գալով տախտակամածը հրամայեց խարիթար գձել եւ նաւը կանդ-

Նեցնել:

— Դեռ շատ շուտ է, ասաց Յակովը. մի ժամ էլ կարող ենք յառաջ գնալ:

— Վ, յդ ես իմանում եմ քեզանից լաւ, պատասխանեց Արարալը: բայց մեք այնու ամենայնիւ յառաջ չ'ենք գնալ գնա եւ կատարի՞ր, ինչ որ ես քեզ հրամայեցի:

Յակովը իսկոյն հնապանդուցաւ, թէեւ մտքումը նախատում էր Արարալին, որ նա ուղղապէս կատարում չէ իւր պարտաւորութիւնները, Դրումմոնդը եթէ իմանար անկասկած նա անբաւական կ'լինէր այսպիսի 'ի զուր յետաձգութեան համար: Բայց ինչպէս ասացինք Յակովը լոեց եւ խարիթար գձելով նստեց տախտակամածի վերայ ճաշի, որ գուրս բերաւ նրա համար Գլէմմինդը նաւասինեակից:

Ուութ ընկնելուն պէս Գլէմմինդը ցած թողաւ ջոփ մէջ նաւակը, որ կապուած էր նաւի կողքից, մտաւ նրա մէջը, թիակները առաւ ձեռը եւ ուղղուեց գէպ'ի ափի:

Այստեղ Յակովը նկատեց, որ Գլէմմինդը հագուած էր աւելի զարգարուն եւ մօդայով (նորոշեալութեամբ) այս հանգամանքը նրան շատ զարմացրեց, որովհեաեւ նա սովոր էր նրա վերայ տեսնել միշտ նաւաստիի հագուստ, այնպէս որ մինչեւ

անգամ յայտնեց այս նկատողութիւնը և
Մարաբլին. Մարաբլը պատասխանեց
հանդարտաբար:

—Ունչնչ վատ բան մի՛ կարծիր. մի զար-
մանար և նրան, որ Գլէմմինգը այստեղ
կառավարումէ ինչպէս գլխաւոր նաւի վերայ:
Դուք ինչպէս երևումէ բարի պատանի
ես, սրա համար ես կամենում եմ քեզ
յայտնել ճշմարտութիւնը: Վացի՞ր . . .
Յակովը. մէկ ժամանակ ես սաստիկ մեծ
պարտքերի մէջ էի ընկած և հաղիւ չընկայ
բանտ. բայց Գլէմմինգը այն ժամանակ մի-
ջակ և մինչև անգամ հարուստ մարդ էր:
Ես նրանից խնդրեցի օգնականութիւն. և
նա մինչև վերջն կոպէկը ինձ համար չը-
խնայեց և իմ պարտքերը բոլորը վճարեց:
Եւ այսպէս ես ազատուեցի և կարողացայ
շարունակել իմ գործս. այս բանից յետ շատ
շուտով Գլէմմինգը վնասուեց մի մեծ գու-
մարով, զըկուեց իրա բոլոր կայքից, և ինձ
նման նշանակուած էր բանտի, սրովհետև
վնասուելով չկարողացաւ հատուցանել իրա
պարտքերը: Եւ ահա նա դարձաւ ինձ խըն-
դրանօք, որ ես ծածկեմ նրան նաւի մէջ,
ուրտեղ ոչ մէկը չէր կարող նրան գտնել:
Ի՞նչ կարող էի անել, Յակովը. կարել՞ էր
մերժել բարերարիս: —

—Ուս այս անկարելի էր. ես նրան ընդու-
նեցի նաւը, որից նա հեռանում է միայն գի-
շերով և այն էլ հաղիւ, որ տեսնի իւր
ընտանիքը. իսկ ցերեկը նա վախենումէ ցա-
մաք դուրս գալ. Ահա քեզ, Յակովը մեր
բոլոր պատմութիւնը և ես յոյս ունիմ, որ
դու ո՛չ մէկին, մինչև անգամ և Դրումմոն-
դին չես պատմիլ այս բանը. Դու միթէ
ինձ կ'մատնես և յաւիտեան անբաղդութեան
մէջ կ'գձես ինձ:

Յակովը շարժեց դրուել և ասաց. —
Կ'սենք թէ ո՛չ եթէ միայն ճշմարիտ է
ամենը. ինչ որ դու ինձ պատմեցիր. Մա-
րաբլ. թող ձեր ասածի նման լինի. միայն
ինձ ասացէք. ինչո՞ւ Գլէմմինգը այստեղ
կառավարող է դարձել և նաւասենեակը իւր
ձեռն է առել:

—Կ'սացի որ ես պարտական եմ Գլէմմինգին,
պատասխանեց Մարաբլը. սրա համար յօ-
ժարութեամբ թողել եմ նրան նաւասենեակը
իսկ իջևանի վարձը նա հանումէ իմ
պարտքիցը. հասկացա՞ր:

—Ասկացայ, ասաց Յակովը:

—Ուրեմն, դու լեզուգ ատամներիդ յետեին
կ'պահէս և ինձ չես մատնիլ Դրումմոնդի
առաջ. միտքդ բեր, որ հակառակ գիպուած-
քում ես կ'սնանկանամ բոլորովին:

— Ես այս ո՛չ մեկ ժամանակ չեմ անիլ
ասաց Յակովը, միայն այն պայմանով, որ
Ֆլէմմնգը ինձ հանգիստ թողնի և ինձ հետ
վաս չվարուի: Ա,ա ամենեին իրաւունք
չունի ինձ հրամայել և ես էլ չեմ ընդունիլ,
որ նա ինձ յիշոց տայ և տանջի: —

— Հատ լաւ Յակովը, ես կասեմ Ֆլէմմնգին
որ նա քեզ հետ վարուի ուրիշ կերպ.
ասաց Մարաբը. հանգիստ եղիք դրա մա-
սին: Խօսակցութիւնը այսպէս վերջացնելուց
յետոյ Մարաբը հրամայեց Յակովին գնալ
պառկել քնել. Յակովը ո՛չ մեկ ժամանակ
այնպէս յօժարութեամբ չեր հնազանդուել
հրամանների ինչպէս հիմակ. բայց այնու
ամենայնիւ մտքումը դրաւ այս դիշերը չքնել
և սրատեսութեամբ նայել քննել ամենը,
ինչ որ պատահում էր նաւի վերայ: Իսկ
ժամանակը երկարացնելու համար նա զգու-
շութեամբ և կամաց փսփսում էր իւր ան-
կողնի մեջ. որ կարծես կամենում էր աւելի
լաւ ծածկուիլ և հանգիստ քել:

‘Արա պառկելուց մի քիչ յետոյ լսուեցին
թիակների ձայներ և շուտով երկեցաւ
նաւակ. որտեղ գտնուում էր Ֆլէմմնգը:
Գիշերը պարզ էր. լուսինը ցօլում էր պայ-
ծառ երկնքի վերայ. այնպէս որ Յակովին
բաւական էր գլուխը բարձրացնել: որ նկա-

տէր ամենը տախտակամածի վերայ: Վաճենից
յառաջ Մարաբը կապից նաւակը, յետոյ
առնելով նաւակից մի մեծ կապոց, դրաւ
իւր մօտ տախտակամածի վերայ:

Կարծես, որ այս կապոցի մեջ մետաղեայ
բաներ էին, որովհետեւ երբ որ Մարաբը
վայր դրաւ, մի բան զրնգաց: Ա երջապէս
ինքն Ֆլէմմնգըն էլ բարձրացաւ սանդուխ-
քով նաւի վերայ. նա էլ նոյնպէս բանած
ունէր ձեռին մի կապոց, առաջինից փոքր
և փաթաթուած մի (ինչո՞ւ իվեռումբը) գեղին
և մետաքսեայ կերպասով:

Յակովը լսեց, որ ինչպէս Ֆլէմմնգը
հարցրաւ Մարաբին. ‘Վաճեն բան կարգի
է և պատասխանեց և յետոյ երկուուն էլ միտ-
սին մտան նաւասենեակ, էլ աւելի չհոգա-
լով Յակովը վերայ և փակեցին իրանց
յետելից գոները: Վաճառ բոլորից Յակովը էլ
առաւել սկսաւ կասկածել, որ այս երկու
մարդի մեջ չարագործութիւն պէտք է լինի:
Բայց ինչքան նա աշխատում էր, մի ճշմա-
րիտ եղբակացութեան չէր գալիս: Ա,ա շատ
գեռահաս էր և անփորձ, որ կարողանար
ճշմարտութիւնը գտնի շատ շուտով: սրա
համար ’ի զուր մտածելով վերջապէս պինդ
քնի մեջ մտաւ:

Ըստ ժամանակ էր արդէն, որ արեհագը ծագել էր և նաւը մի փոքր տարածութիւն արդէն յառաջ էր գնացել երբ Յակովը զարթեցաւ: Խնչպէս երեում էր Գլէմինդը ուրախ էր, որովհետեւ կատակներ էր անում քնած Յակովի հետ եւ բոլորովին փոխած էր իւր վարուեցողութիւնը: Յակովը իսկոյն հասկացաւ, որ Մարաբը ասել է Գլէմինդին, ինչ որ խոստացել էր: Իսյց այդ քաղցր վարուեցողութիւնը ո՛չ թէ քիչացրաւ Յակովի զգուշութիւնը եւ արթնութիւնը: այլ ընդ հակառակը նա աւելի հմտութեամբ սկսաւ չափելու ու կշռելու, ինչ որ տեսնում էր իւր աշքերի առաջ: թէ եւ ցոյց չէր տալիս իւր կասկածանքը եւ յօժարութեամբ կատարում էր բոլոր հրամանները եւ եռանդով կատարում էր իւր գործերը:

✓ Ենցկացան մի քանի ամիսներ. նաւը գնում էր յետ ու յառաջ թէմլայի վերայ. բոլոր այս միջոցում Յակովը նկատեց որ: Գլէմինդը միայն մի քանի տեղերում առ հասարակ գուրս էր գնում նաւից եւ վեր էր առնում իւր հետ գատարկ քսակներ. իսկ յետ դառնալու ժամանակը բերում էր իւրը: Այս գնալ ու գալը կատարում էին գաղտնի կերպով եւ Մարաբը ու Գլէմ

մինդը չէին կարծում որ նրանց յետեւից նկատող եւ արթուն պահապան կայ: Գլէմինդը վարում էր ինչպէս եւ յառաջ քաղցր նրա հետ, իսկ երբեմն մինչեւ անդամ առաջարկում էր նրան և փող իսկ Յակովը միշտ հրաժարում էր: Իսյց նաւասենեակը գեռ հետաքրքրում էր պատանու սիրտը: Գիշեր ու ցերեկ մտածում էր միայն զրա վերայ. եւ հնարք էր պառում, որ կարողանայ նրա մէջը մտնել, բայց ո՛չ մի յարմար միջոց գեռ չէր պատահում, որ կատարի իւր կամքը. նաւասենեակի մօտ միշտ գտնում էր կամ Մարաբը կամ Գլէմինդը եւ երբէք չէր պատահում, որ երկուները միասին հեռանային նաւից:

Միայն միանդամ գիշերը կարողացաւ Յակովը մօտենալ բորիկ ոտներով գոնիերի մօտ եւ ծակով նայել ներս: Այնտեղ վառվաւ էր մի ճրագ եւ Մարաբը նստած Գլէմինդի հետ միասին սեղանի մօտ, փող էին համարում եւ բաժանում իրանց մէջ հաւասարաշափ. բայց Գլէմինդը խօսում էր ծաղրաբանական կերպիւ եւ ասում էր, որ նա աւելի շատ պիտի ստանայ քան թէ նա: Ամիսո՞ս Յակովը աւելի չի կարողացաւ նայելու, որովհետեւ այդ ժամանակը Գլէմինդը մօտիկանում էր գոնին, նա բաց արաւ գուռը, բայց Յակովը արդէն պառկած էր

իւր անկողնի մէջեւ ձեւանում էր սաստիկ քնած:

Եւ այսպէս Յակովը հասկացաւ, որ Մարարլի բոլոր պատմածները սուտ են, նա գիտէր, որ նաւասինեակի մէջ է բոլոր գաղտնիքը: Ո՞հ անդամ գիշերը, երբ Գլէմմի դը իւր սովորութեան պէս դուրս եկաւ նաւիցը՝ Յակովը բարձրացաւ անկողինքի վերայ եւ սկսեց մտիկ անել Մարարլին: «Ա, նստած մի տակառի (ՅՈՎՐԱ) վերայ եւ թէք ընկած կայմին ինչպէս երեւում էր սաստիկ քնած էր. Յակովը մտածեց „կամ հիմակ կամ երբէք” և իսկոյն վերկենալով սոնի ծայրե, թի վերայ մօտիկացաւ Մարարլին, որ իսկը իմանայ քնած է նա թէ ո՛չ Մարարլը պինդ խոացնում էր եւ ահա մեր ախոյեանը առանց ձայնի մօտիկացաւ նաւասինեակին եւ կիսաբաց գռնով ներս մտաւ: Գրունը փոքր ինչ ձայն հանեց. Յակովը բոլոր անձնով գողաց եւ սաստիկ սիրուը խփեց. իսկոյն յետ նայեց Մարարլի վերայ, բայց տեսնելով, որ Մարարլը մի եւ նոյն գրութեան մէջն է, վերջին ոյժը ժողովեց եւ սաստիկ արիութեամբ մտաւ վերջապէս նաւասինեակ:

Ա, ա վեր առաւ սեղանի վերայից ճրագը եւ ման եկաւ նաւասինեակի շուրջը. կողքի պատերի երկայնութեամբ դրուած էին երկու մահակալներ (ՔՐՈՎՅՏԵ) մէկը

Գլէմմինդինը - միւսը Մարարլինը և իւրաքանչիւրի տակ մէկ մէկ գյոնդգոյն սնդուկ: Սնդուկները փակուած չէին. Յակովը բարձրացրաւ նրանց կափարիչը և տեսաւ, որ այդտեղ գտնւում էին միայն ամեն տեսակ շորեր և ձերմակեղէններ (ՅԵԼԽԵ): Օգուշութեամբ փակելով սնդուկները, Յակովը շարունակեց իւր գործը յետեի պատի երկայնութեամբ դրուած էին երեք պահարաններ (ԱԿԱՓԵ): «Արանք փակուած էին բայց իւրաքանչիւրի մէջ կար մի բանալիք: Բացանելով զգուշութեամ առաջինը, նա տեսաւ նրա մէջ շատ յաղձապահէեայ (ՓԱՐՓՈՅՎԱՅ) ամաններ, գանակներ, պատառաքաղներ և զանազան սեղանի պատկանելիքներ. իսկ երբ կամենում էր բացանել երկրորդ պահարանը. բանալիքը սաստիկ ձայն հանեց:

Յակովը սարսափեց և սկսաւ ականջ դնել թէ արդեօք Մարարլը չզարթնեցաւ, բայց վերջապէս հանողուեցաւ, որ նա զեռ սաստիկ քնածէ: Այս պահար անի մէջ Յակովը տեսաւ երեք դէղ արծաթեայ դրկալներ և գանակներ և պատառաքաղներ. ծոցի ժամացոյցներ, ամենայն կերպ ապարանջաններ ողեր, մատանիներ և ուրիշ թանկագին զարգարանքներ հասարակ և առ գին քարերով:

Բաց 'ի սորանից իւրաքանչեւրի վերայ
կար մի թղթի կտոր նշաններով, որոնց
Յակովը չ'կարողացաւ հասկանալ:

'Կատելով բոլորը ուշադրութեամբ, նա
բայց արաւ երրորդ պահարանը սա լքցուած
էր թանկագին մետաքսեայ և թաւիշեայ
(բարխառան): կերպամներով, քնքոյշ
շրջանալզրդեր, երեսի քողեր և սրանց
նման ուրիշ զարդարանքներ: Բաց 'ի սրան-
ցից այստեղ կային Յ զոյգ ատրճանակներ,
ամենազեղեցիկ շնչուածքի պատրաստ հրա-
հաններով և ինչպէս երեւումեր լքցրուած
էին: Յակովը բոլորը նկատեց հիմակ, ու
րոլորը տեսաւ և նրա հաւաստիների գործը
արդէն նրա համար էլ դադոնիք չէր. նա-
խացաւ, որ գրանք աւազակներ են, կամ
ինչպէս առ հասարակ ասումն հէներ:
Ֆլէմինգը գողանում էր. իսկ Վարարլը
պահում էր գողացածները. և վերջումը
բաժանում էր հաւասարապէս:

Հասնելով գոնին, Յակովը մտաբերեց,
որ մոռացել է միջին պահարանը փակելու.
Վասն որոյ յետ զարձաւ, ուղղելու իւր
սիալը. Բանալին կրկին ձայն հանեց. բայց
այս անգամ այնպէս սաստիկ ձայնով, որ
Վարարլը զարթնեց:

Յակովը վախութիւնից հաղիւ վայր

չընկաւ. բայց իսկոյն բաղդաւորաբար մտա-
բերեց որ, հզօրներին Վատուած օգնուկան
է:" ՚Ա, իսկոյն հանգցրաւ ճրագը, որ
բանած էր ձեռքին և երկչտութեամբ
սկսաւ նայել Վարարլի շարժողութիւն-
ներին: Նաւալվարը օրօշտալով և ծոմուալով
վերկացաւ, մի քանի անգամ գնաց տախ-
տակամածի այս կողմից այն կողմ- մտիկա-
ցաւ յետոյ նաւասենեակին և ոչնչ կասկա-
ծանք շտեսնելով փակեց նրան բանալիքով
և դրաւ բանալին գրպանը, և այսպէս
Յակովը ընկաւ բանտի մէջ. նա սարսա-
փում էր առաւել քանի Վարարլը գեռ
գոնից հեռացել չէր: Հազիւ նա կարողա-
նում էր շունչ տանել. երբ միտքն էր բե-
րում, որ ինքը աւելի տեղ չունի գուրս
դալու որ նրան այդտեղ տեսնելու են և
ուրիշ սրանց նման հազար մոքեր:

'Ա, աւ գիտէր, որ եթէ Ֆլէմինգը
նրան տեսնէր նաւասենեակում. ինայելու
չէր և կարեկցելու. Յակովը վճռեց կան-
չել Վարարլն, նա յոյս ունէր նրանից
ազատուելու խնդիրքով և նրա կողմից նախա-
տինքով նա հէնց կամենում էր աղազակել
երբ միտն ընկաւ, որ Վարարլը անպատճառ
պէտք է գար նաւասենեակը, ճրագը վառե-
լու. ուրեմն կարելի կ'լինէր մինչի վառելը

Դռնից դուրս թռչելու տախտակամածը.
Վասն որոյ Յակովը մտածեց սպասել, ինչ
հետեանք կունենայ: Բայց Մարաբը չէր
երեսում: և փոքր առ փոքր մօտիկանում էր
Գլէմմինգի յետ գառնալու ժամանակը:
Վերջապէս Յակովը յուսահատ և կուրծքը
բռնած մօտիկացաւ գոնին որ բաղնի (լոռժի):
Եաւ հէնց ուզումէր գոնին կպչել և պատ-
րաստ էր կանչելու, աշա նա լսեց ջրի ձայն
և թիակների հարուածներ, ձայներ լսուեցին
և Յակովը հաօկացաւ, որ այս Գլէմմինգըն
է ուրեմն ազատուելը էլ անկարելի է:

Մէկ յոյս էլ զեռ մնացել էր խեղճ պատա-
նին, դուրս թռչել գոնիցն. հէնց որ բաց
կ'անեն գող աւազակները գուռնը, որ ներս
մտնեն: Յակովը վճռեց այս միջոցը գործ
ածելու և կանգնեց գոնի առաջին որ չկոր-
ցնի յարմար բոպէն:

Երբ որ Գլէմմինգը և Մարաբը մօտի-
կացան նաւասենեակին, Յակովը լսեց որ
ինչպէս նրանից առաջինը առաց: -- Շա-
պիր, մեր յետեից ման են գալիս, բոլոր
ունեցածներս պէտքէ ժողովել տոպիակների
մէջ և չուանով ջրի մէջ թողնել, այնպէս
որ եթէ պօլիցէյսկիները կ'գան էլ չդիտե-
նան ոչինչ այսպիսով մեք պատժից կ'ազա-
տուինք:

Արանից յետ բանալիքը շվջեցին և
դուռը բացուեցաւ, Յակովը, եթէ կեանքը
նրա համար թանգ արժէր, պէտք է րոպէ
չկորցնէր և նրանց մտնելուն պէս դուրս
վազել տախտակամածը: Դեռ շմտած նաւա-
սենեակը Գլէմմինգը ասաց:

--Պարտիր ճրագը, մինչեւ ճրագ չլինի.
ոչինչ անել չէ, կարելի որովհետեւ մմու-
թիւնում շատ անդամ ձեռների կաշին քե-
րւում է կպչելով սուր բաների:

Մարաբը գտաւ ճրագը այն սեղանի
վերայ, ուրտեղ դրած էր Յակովը և
մօտիկացաւ իւր ընկերին. սա գըրպանից
հանեց մի լուցկին (սովէնիո) և նրանցից
մէկը վառեց. լուցկին շխակոցով վառուեց
և մէկ բոպէ պայծառ լուսաւորեց բոլոր
նաւասենեակը: Բայց այս բոպէն բաւական
էր որ տեսնէին դէմ առ դէմ Յակովին.
Նա սարսափած նայում էր իւր ուղեղ հա-
կասակորդների վերայ:

--Յակով, բացազանչեց զարմացած
Մարաբը:

Գլէմմինգը, վախութիւնից կորցրաւ
լուցկին, բայց իսկոյն իրան գալով նա ներս
գձեց Մարաբին նաւասենեակը, փակեց
դուռը ինքը թէք ընկաւ այս կողմից եւ
չանդութեամբ վառեց ճրագը: Դժուար

էր նկարագրել այն, ինչ որ Յակովը
զգումքը այս ժամանակ: Օանաղան մտքեր
լրցրած էին նրա գլուխը. նա տեսաւ որ
փախուստը այսուհետեւ անկարելի է. Այ-
կայն նրա նպատակը որովհետեւ բարի էր
եւ գովելի. ապա չկորցրաւ իրան եւ հաս-
տատութեամբ վճռեց տանել ամենը, ինչոր
կ'պատահէր նրա հետ:

Երբոր Ճրագը բոլորովին լուսաւորեց
նաւասենեակը, Յակովը նայեց թշնամինե-
րի վերայ. Մարաբլը սփռնած էր և ինչպէս
երկումքը դողումքը. Գլէմմինգը երեսը
արտայայտումքը մի անսովոր հանգստութիւն,
նրա պոռշները սաստիկ յուփ էին եկած և
աշքերի մէջ փայլումքը թէ յուսահատութիւն
թէ վճռականութիւն. Յակովը այս ամենից
հաղիւ լացը պահեց: Ո՞հ քանի բոպէ
Գլէմմինգը ուղղակի նայեց Յակովի երե-
սին եւ վերջապէս ասաց.

—Դու մտելես նաւասենեակը թէեւ քեզ
ասուած էր, որ եթէ մի այդպէս փորձ
փորձես կեանքդ կ'կորցնես, ուրեմն հիմի
կ'մեռնես թէմզայի մէջ:

—, Լացով վերքը չես առողջացնիլ,” պա-
տասխանեց Յակովը սփռնած երեսով, վճ-
ռեցէք շուտով ինչ անելու էք:

Գլէմմինգը յարձակուեց Յակովի վե-

րայ, բռնեց նրան եւ չնայելով պատանւոյ
հակառակութեանը՝ դուրս բերաւ գոնի մօտ
բայց Մարաբլը իսկոյն բռնեց նրանից եւ
ասաց:

—Ո՞ի սպանիր մանուկին, մի սպանիր, ես
թող չեմ անիլ. Լաւը այն է աշխատել
նրան էլ քաշել մեր կողմք: Փողերը կուրաց
նում են մարդուն. եւ նա շատ գեռահաս է.
նա աւելի լաւ կ'համարի չարագործութիւն,
քան թէ մահ: ասաց Մարաբլը կամաց,
կամաց:

Գլէմմինգը մի բոպէ կանգնեց եւ յետոյ
ասաց. տեսնենք. — Լավ՛, (տարրաւ նա-
Յանուշին) մէկ միջոց կայ քո ազատուե-
լուդ: Դու նաւասենեակումն էիր, տեսար
բոլոր պահարանները եւ շատ շուտ կարող
ես մեզ մատնել. բայց դու էլ ընկերացիք
մեզ հետ, եւ մեք քեզ ոչինչ չենք անիլ
գու կ'լինիս մեզ հետ աշխատակից, կ'ապրիս
նաւասենեակում եւ քո բաժինը կ'ստանաս:

Գլէմմինգը հանեց եւ թափեց սեղանի վե-
րայ մի գեզ ոսկի փողեր եւ շարունակեց,
տես, սրանք քոնը կ'լինին եւ էլ աւելի
կտամ, եթէ միայն խոստանաս լոել եւ կ'օգ-
նես մեզ ամեն բանում: Համաձայն ե՞ս
վճռի՛ր շուտով, պատասխանի՛ր, այս կամ ո՛չ
կմացի՛ր, որ քո պատասխանիցդ է կախուած

քո կեանքդ և քո թշուասութիւնդ քո հա-
րասութիւնդ եւ շան պէս ջրի մէջ մահդ:

Ծակովբը գիտէր, որ Ֆլէմին-
դը առանց գլութեան կ'կատարէր իւր
ասածները, սակայն նա չերկմուեց եւ
ասաց համարձակապէս:

— Պող գառնալը չեմ ուզում. Արէ՛ք ինձ,
ինչ կամենումք: Ինչպէս առիւծ յարձակու-
եց Ֆլէմինդը իւր որսի վերայ. բռնեց
Յակովին դուրս բերաւ դռնից. Ծէեւ սա
էւ նրան հակառակում էր: Ո'արաբը վա-
ղեց ճանապարհը փակելու. բայց իսկոյն
վայր ընկաւ ուշաթափ ատրճանակի կոթով
հարուածից: Կազուր էր Յակովի հակառա-
կում Ֆլէմինդի հսկյայական զորութեան.
Ֆլէմինդը շուռ տուաւ նրա կռները դէպ'ի
մէջքը, բռնեց մէկ ձեռքով. իսկ միւսովը
փակեց բերանը, տարաւ նաւի: Եզերքը եւ
վեր բարձրացնելով սաստիկ հարուածով
գձեց ջրի մէջ. Ո'էկ ձայն դուրս եկաւ
ալիքների մէջ եւ յետոյ ամենը հանգարու-
եց. իսկ Ֆլէմինդը մէկ վայրենաբար ծի-
ծաղեց, կարծելով որ կրկիւղից աղատուեցաւ:
Ո'ի անգամ էլ նա ականչ դրաւ ալիքներին,
բայց լսելով միայն այն ալիքների ձայները,
որ կպչում էին նաւին, շարագործը յետ
դարձաւ նաւասենեակը. ուրտել բոլոր ջան-

բոլ սկսեց ծածկել բոլոր գողացած
բաները:

Իսկ մեռած համարուած Յակովի քա-
ջութեամբ լողում էր Ծէմղայի ջրերի մէջ.
բաղդասրաբար նա շատ թեթև էր հագ-
նուած. նրա վերան միայն մի շապիկ կար:
Տոլոր ուժով նա կավում էր ջրի հետ և
օրհնում էր բաղդին, որ ինքը լողալ էր
սովորած: Չնայելով նրան, որ ափերը գրտ-
նում էին 14 վերստ հեռաւորութեամբ.
Յակովի (անիսոնալեալեան) քաջութեամբ
յառաջ էր գնում. բայց ջուրը այնպէս
ցուրտ էր. որ նրա անգամները համարեա
սառեցին և նա սկսաւ յոյսը կտրել և ճըշ-
մարտապէս կ'մեռներ. եթէ մէկ նոր զօրու-
թիւն շուտանար լսելով թիավարնէրի ձայներ
և տեսնելով ո՛չ հեռու իրանից մի նաւակ:
Կա ժողովեց իւր վերջի ոյժը. ալիքի
զօրութեամբ բռնեց թիավարնէրի մէկից.
և կանչեց ,օգնեցէք:”

— Ոպասեցէ՛ք. խեղդուող կայ այստեղ, ասաց
մէկը նաւակի միջից:

Կաւակը կանդ առաւ և Յակովին հա-
նեցին ջրից: Կա այնքան թուլացած էր
ջրտից և աշխատանքից, որ խօսել է՛ր կա-
րողանում: Կարա բերանը մի փոքր օղի
ածեցին, փաթաթեցին տաք մուշտակի (սիւրս)

մէջ և սկսեցին շփել ձեռքերը և ոտները.
մինչեւ որ խեղձը ուշքի եկաւ: Հետոյ նաւ-
ակի մէջ նստածներից մէկը, ինչպէս երեսու-
մբ գլխաւորը, իսկ յետոյ որ գուրս եկաւ
թէ պօլիցեայի օֆիցէր է, հարցրուց Յակով-
բին թէ՝ „Ի՞նչ նաւից ես դու պատասի:”
— Պօլի նաւից, պատասխանեց Յակովը:
— Մէք էլ նրան ենք պտռում, ասաց օֆի-
ցերը. գիտում ե՞ս դու որտեղ է նա խա-
րիսխ գձեւ:

Յակովը ցոյց տուաւ նաւի կանգնած
կողմը և ճանապարհին պատմեց, ինչ որ
պատահել էր նրա հետ այս գիշեր:

(Օ) Փիցերը հրամայեց իւր թիավարներին
շտապիլ և մի քանի րոպէից յետ նրանք
հասան արդէն նաւին և օֆիցերը իւր բոլոր
խմբով բարձրացաւ տախտակամածը: Յա-
կովին էլ հետեւց նրանց բայց օֆիցերին
խորհուրդով նա մնաց ամենից յետ: Պլէմ-
մինդը իսկոյն մօտիկացաւ օֆիցէրին և կտ-
րական հարցրաւ, թէ նա ի՞նչ է պտռում
նաւի վերայ: (Օ) Փիցէրը սառնասիրտ ցոյց
տուաւ թուղթը և պահանջից նաւասենեակի-
բանալին, որ մէջը պտրտի:

Պլէմմինդը տուաւ բանալին առանց մի
հակառականութեան. օֆիցէրը մտաւ նա-
ւասենեակ և մնալով այնտեղ շատ քիչ, յետ

գարձաւ տախտակամածը:

— ԱՌ ի՞նչ է, հարցրուց Պլէմմինդը ծաղ-
րաբար, շատ բան գտա՞ք:

(Օ) Փիցէրը միտք չգարձրաւ այս խօսքե-
րին և հարցրաւ, „Քանի հոգի էք այստեղ:”

— Դուք ինքներդ կարող էք տեսնել. հա-
մարձակ պատասխանեց Պլէմմինդը:

— Ասպա ո՞ւր է այն պատանին, որ մեզ
ինչպէս յայտնի է այսօր առաւօտ նաւի
վերայ էր:

— Երեկի գուրս է եկել ափը, եթէ այստեղ չէ:

— Կսացէք ինձ ով ձեզանից նրան գձեց
նաւից ջուրը, հարցրեց բարկութեամբ օֆի-
ցէրը:

Ինչպէս կայծակից խփուած Պլէմմինդը
գունաթափուեց այս հարցմունքից, իսկ
Մարաբը, որ մինչեւ հիմի մի բառ գեռ
չէր ասել դողդողալով ասաց:

— Վստուած տեսնում է, որ ես չեմ. ես
նրան կ'ազատէի:

Լոելով Յակովը այս բանը յառաջ
եկաւ և ասաց օֆիցէրին:

— Կաւարարը ճշմարիտ է, նա ամեն կերպ
կամենում էր ազատել ինձ այս չարագործի
ձեռիցը և նա կարող էր մինչեւ անգամ
ազատել. եթէ Պլէմմինդը նրան գետնին
չխփէր: Մարաբը անմեղ է, ահա սա է

ինձ խեղդողը և ո՞չ դա:

Կարելի չէ նկարագրել, թէ որչափ ու-
րախացաւ Մարարլը, երբ տեսաւ Յակովին
իսկ Գլէմմինդը ընդ հակառակը երեսը յետ
դարձրաւ, մի բառ չհանեց բերանից և յետոյ
ինքն ակամայ թոյլ տուաւ, որ իրան շղթայեն:
— Փառք Շատուծոյ, որ դու ազատես, բա-
ցագանչեց Մարարլը դառնալով Յակովին
մող ինձ անեն, ինչ հարկաւորն է, ևս մե-
զաւոր եմ. սա իմ թուլութիւնս էր:

Դրան նոյնպէս շղթայեցին. օֆիցէրը
նաւի վերայ պահապան դրաւ, իսկ միւսնե-
րին հրամայեց մանել նաւակը: Դրանք
գնացին ափը և այս գիշերը անցկացրին
պօլիցիայի տների մէջ մինչի առաւօտ:

Դ. Եդ իսկ երեկոյեան իմացաւ Դրում-
մոնդը, ինչոր պատահել էր, ուստի միւս օրը
առաւօտը շուտով եկաւ. Յակովի մօտ,
և տարաւ իւր մօտ: Մի քանի շափաթ
Յակովը անգործ մնաց ցամաքի վերայ.
Դոլոր այս ժամանակը նա պէտք է ներկայ
լինէր Գլէմմինդի և Մարարլի հարցուփորձե-
րին: Դատաստանը վերջանալուց յետոյ
Գլէմմինդին կախեցին. իսկ Մարարլին ու-
ղարկեցին մի քանի տարուայ Բօտանիբէյ,
Ռվատրալիա (ուրախ ուղարկութեն անդպէ-
տոցիք իրանց յանցաւորներին): Դրումմօնդը

չէր գիտում, ինչպէս վարձագրի Յակով-
րին նրա ճշմարտասիրութեան և ախյեանու-
թեան համար: 'Տա առաջարկեց նրան պա-
րապուիլ նրա հաշուասենեակում (Կահորա)
մինչև մի ուրիշ նաւի վերայ տեղ գտնելը:
որ վարձագրէր նրա աշակերտութիւնը:
Հաշուապահի պաշտօնը ո՞չ մէկը բռնած
չէր. և Յակովը ընդունէց առաջարկու-
թիւնը և բաւականին ժամանակ գեռ նրա-
նով ուրախ էր: Դրումմօնդը և նորա կինը
նրա հետ վարլում էին շատ քաղցր. իսկ
փոքրիկ Ապուն այնքան սիրումէր Յակով-
րին, որ համարեա նրանից հեռանում չէր 'ի
հարկէ այն ժամանակ, երբ հաշուասենեա-
կում պարապմունքները և գործերը վերջա-
ցած էին և աղատ ժամերն էին նրանց տե-
ղը փոխանակում:

* * *

Գ Լ Ա Խ Խ Ն Հ Ե Ր Ա Ր Դ Վ

Յակովը և Տուրնբոյլ:

Յակովը շարունակում էր Պարումմօնդի մօտ մնալը, որովհետեւ սա նրա հետ վարդում էր, ինչպէս իւր հարազատ որդուն հետ։ Բայց միշտ շարժողութեան սովոր և պատաշմունքների ու անցքերի սիրող Յակովը չկարողացաւ նստած կեանքի սովորել. սրա համար շատ ցանկանում էր թէմզա յետ գտոնալու։ Թէկ նա տեսնում էր, որ ինքն օգտակար մարդ է Պարումմօնդի համար և թէ այստեղ կարող է նա իւր ծառայութիւնը ցոյդ տալ նրան։ իւրեւ բարերարի։ Կա դարձաւ անբաւական, խոժոս, գիւրագրգիռ և կորցրաւ իւր հոգւոյ ուրախ գրութիւնը։ Խոկ Պարումմօնդը ցոյց էր տալիս իրր ոչինչ նկատում չէ։ Կամենալով պատանուն օգուտ բերել նա մտածում էր որ այսպէս լաւ ճանապարհով եթէ սովորի Յակովը այս կեանքին։ Այն ժամանակ ինքը չե փոխիլ լաւը վատին։

Յակովը իւր գեռահասութեան պատճուաւ, չէր գիտում ինչպէս հարկն է գնահատել իւր բարերարի դեպ ՚ի նրա ունեցած երախտիքը, բայց այնու ամենայնիւ

իւր շնորհակալութիւնը ցոյց տալու համար աշխատումէր հաճշացնել ամենայն ծառայութեամբ նրան և նրա ընտանիքին։ Արա համար Պարումմօնդը և նրա կինը և մանաւանդ փոքրիկ Առաջան աւելի ու աւելի սիրում էին Յակովըին։ Եւ որովհետեւ միշտ Ճաշելում եւ թէ մի որ եւ իցէ ընտանեպատկան գործերում մասնակցումէր նրանց. ապա պատահմունք ունեցաւ մի քանի մարդկանց հետ ծանօթանալու։ Բայց ո՞չ մէկը այս ծանօթներից նրան այնպէս հաճելի չեղաւ, ինչպէս Տուրնբոյլ նաւապետը։ Այս բնակում էր ո՞չ հեռու Պարումմօնդից թէմզայի ափին, սեփհական ամարանոցում։ Յակովը հոգւով չափ սիրեց այս բարի ծերին եւ աշխատումէր նրան իւր վերայ ուշադրութիւն դարձնել տալ. Տուրնբոյլ նաւապետը, թէ եւ պսակուած էր, բայց անզաւակ էր։ Իւր փոքրութեան ժամանակ սա մի քանի անգամ տեսնել էր Վարէնլանգիա։ Բաղդն էլ նրան օգնել էր, եւ կիտորսութեամբ իւր համար մի մեծ կայք էր թողել։

Ակսելով իւր ծեայութիւնը նաւի պաշտօնեայից, նա իւր կրթութեամբը եւ բաջութեամբը հասել էր մինչեւի նաւապետի ասափիճան։ Կա սիրումէր պատմել իւր ճանապարհորդութիւնների վերայ, բայց ո՞չ մէկ

մարդ այնպէս ախորժալի չէր լսում, ինչ-պէս Յակովը. սա քանի շատ եւ շատ էր լսում հիւսիսյին երկրի սքանչելիքների վերայ այնքան շատ էր ցանկանում ինքն էլ տեսնի այն երկիրները: Իայց Տուրնբոյլը ամենեւին չէր հաւանում շատ այսպէս ցանկութիւնների. վասն որոյ դարձաւ նա Յակովին եւ ասաց:

— Ո՞ի կարծիր, Յակովը, որ Գրէնլանդիա ճանապարհորդութիւնը մի թեթեւ զրօսանք է. բեւեռային երկրները գնացողներից հազիւ կէսը յետ է գառնում հայրենիք, որովհետեւ այս ճանապարհորդութիւնը շատ նեղութիւններ եւ արգելքներ ունի: Տանը մէջ, վառուած վառարանի առաջին, բոլոր-վին հանգստութեան մէջ, 'ի հարկէ շատ հեշտ է խօսել փորձանքների համար. թէեւ պարզապէս կասեմ, որ ես շատ ուրախութեամբ եմ մտաբերում արգելքները եւ փորձանքները, որոց ես յաղթել եմ: Իայց ես ոչ մէկին խորհուրդ չեմ տալ բռնել իմ վեր առած ճանապարհս. թէ եւ կարելի է սպասել որ դու Յակովը կ'ունենաս այնքան արիութիւն մի այդպիսի գործում. բայց էլի ես քեզ ասում եմ, որ դու չունիս զրահամար հարկաւոր կատարեալ առողջութիւն:

✓ Քի վերայ, այս տեղ դու կ'գտնես աւելի օգտակար եւ այնքան էլ շահաւէտ աշխատանք:

Տուրնբոյլի այս 'ի սրտէ խոսեցած խոսքերը ներգործեցին. եւ միքանի ժամանակ Յակովը մէծ սիրով էր կատարում իւր հաշուապանական պարտաւորութիւնները:

Իայց մէկ օր տուն գառնալով նա պատահեց մի նոր գործակատարի, որին Գրում-մոնդն էր հրաւիրել, որովհետեւ նրա վաճառականութիւնը շատ շուտով ընդարձակուած էր: Գործակատարի անունը Գօձօն էր. առաջին հայեացքից Յակովը մի (զուտան) ատելութիւն զգաց դէպ 'ի նա. Այս զգացմունքը օրստորէ աւելանումէր, ոյրովհետեւ Գօձօնը կռուասէր էր, չար եւ անխղճաբար նեղացնումէր խեղճ Յակովին, նա նախանձումէր, որ Յակովը սիրելի էր Գրումմոնդի ընտանիքի մէջ եւ ցանկալով ինքը ունենալ մի եւ նոյն նշանակութիւնը, բոլոր ջանքով կամենում էր վատացնել նրա բարերաբների աշքին եւ վերջապէս յաջողապէս հասաւ իւր նպատակին: Այս ամենի վերջը այն եղաւ, որ այս երկու պատանիների մէջ ծագեց մի շատ սաստիկ թշնամութիւն, որ շուտով եւ յայտնուեցաւ:

Մէկ անգամ Յակովը նստած էր

Հաշուասենեակում իւր սեղանի (սպօլի) մօտ
եւ մեծ եռանդով օրինակում էր մի երկայն
հաշիւ. Երբ որ նա համարեա վերջացնու-
մեր, մտաւ Գրօննը եւ սկսեց թափել Յա-
կովրի վերայ հազար նախատինք ու յիշոց,
որոնք 'ի հարկէ նրան յարմար չէին:

Համբերութիւնից դուրս գալով Յա-
կովըն էլ պատասխանել սկսեց Գրօննի յի-
շցներին աւելի գառն և յամառ խօսքերով:

Գրօննը լոեց և հրամայեց ցոյց տալ
նրան հաշիւ, որ օրինակում էր: Փոքր
նայելով բարկացած պատուեց թուզթը և
չնայելով որ պարտաւորութիւնը բաւակա-
նին լաւ կատարուած էր հրամայեց Յակով-
րին կրկին օրինակել մի և նոյնը: Յակովըը
սրանից վշտանալով և համարելով Գրօննի
հրամանը անիրաւացի յամառութեամբ պա-
տասխանեց, որ չի կարող կատարել միւս
անդամ և մի զարհուրելի կերպարանքով
նայեց Գրօննի վերայ:

Գրօննը, որ համարում էր Յակովըն
իւր հպատակ, սաստիկ բարկացաւ. վեր
առաւ իւր մօտիկ գրբերից մէկը և խիեց
Յակովի գլխին:

Այս հարուածը արդէն այնքան չարաց-
րաւ Յակովըն, որ նա էլ վեր առաւ հաստ
և լայն քանոնը և այնպէս սաստկութեամբ

բաց թողաւ Գրօննի ճակատին, որ նա ու-
շաթափ ընկաւ և արիւնը շաղաղեց բոլոր
երեսը:

Հենց այն բոպէին, որ Յակովըի քա-
նոնը վեր գձաւ Գրօննին, մտաւ Գրում-
մօնդը: Ո՞ի բառ անդամ չասելով Յակով-
րին, նա մի քանի մարդկանց օգնականու-
թեամբ, դուրս բերաւ Գրօննին հաշուա-
սնեակից և տարաւ իւր սենեակը:

Յակովըը լաւ հասկանումէր որ ապացոյց
ները իրան են դատապարտում և թէ
Գրումմօնդը միայն նրա համար չխօսաց,
որ շատ բարկացած էր և չէր կարող իրան
զապելու:

Շուտով Յակովըն կանչեցին Գրում-
մօնդի մօտ: Կա վճռել էր իւր մտքումը,
որ ամենը ճշմարտապէս, ինչպէս պատահել
է պատմի նրան: մտնելով սենեակը Յակով-
ըը իսկոյն նկատեց, որ իւր տէրը սաստիկ
բարկացած էր: Գրումմօնդը շուտ շուտ
քայլելով գնում էր սենեակի այս կողմից
այն կողմը և ամենեին չէր նայում Յակով-
ըի վերայ:

Գրօննը ուշի գալով, իսկոյն խարերա-
յութեամբ սկսեց բոլորը պատմել Գրումմօն-
դին. նրա փոքր ընկերակիցը ցանկանալով
պատիւ ստանալ իւր տիրոջից հաստատեց

Վաօձօնի ասածները: Դրումմօնդը հաւատաց բոլորին, ինչ որ պատմեցին նրան Յակովի թշնամիները. բայց նա մնաց հանդարտ, յուսալով որ Տիկին Դրումմօնդը և Այառան նրան կ'պաշտպանեն: Ա երջապէս Դրումմօնդը սկսեց այսպէս:

— Յակովի, ես քեզ շատ խղճում եմ և ափսոսում, որ այսօրուայ պատահմունքի համար գու էլ իմ տանս մնալ կարող չես. ես քեզ լաւ չ'եի Ճանաչել, ես կարծում էի գու աշխատասէր և բարի տղայ ես և կատարումն քո պարտաւորութիւններդ սիրով և ուշիմութիւնով: Ես կամենում էի քեզ մի լաւ և ընդունակ մարդ շինել. բայց իմ յայսերս զուր գուրս եկան: Տեսնում եմ որ սիսալուել եմ. սրա համար բաժանեւմ եմ քեզնից, ինչպէս մի անբարեխիղճ և անշորհակալ պատանոց:

— Ինձ մի մեղագրէք գոնէ այսպիսի յատկութիւններում: Ասեցէք, ես կամենում եմ Ճշմարտուել:

— Իսկո՞ր քո արդարութիւններդ չեն կարող ինձ շարժել և հերքել այն, ինչ որ ես իմ աշքովս տեսել եմ ինչ որ ես ասացի կ'կատարեմ: Դու հէնց այսօր կ'ժողովես քո բոլոր հարկաւորութիւններդ և կ'գնաս նաւ: Այնտեղ անցկացնես քո ուսման միւս տարիները,

իսկ յետոյ.... դու ինքդ հոգա՛ քեզ համար ինչպէս գիտես: Մհա՛ քեզ մինչեւ այժմ քո ծառայութեանդ համար, փողերը, սրանով կ'վերջանայ մեր մէջ հաշիւը: Մպրիր բաղաւուր և Ճշմարտութիւնը մի ժամանակ մի՛ աշխատիր — դա բոլորովին անօգուտ է:

Վ, յս խօսքերից յետ Դրումմօնդը իսկոյն դուրս եկաւ սենեակից և այսպիսով Յակովը չկարողացաւ պատմել բոլոր պատահած անցքը Ճշմարտութեամբ:

Ճանաչելով իւր արդարութիւնը Յակովը իրան համարումէր վշտացած, որ պարզ երեսումէր նրա երեսից:

Տժբաղդաբար այս բանը սուտ կարծիք տանել տուաւ և Դրումմօնդի տիկնոջ. նա այս համարեց յամառութիւն և կոպտութիւն, հառաչեց և երեսը ըրջեց Յակովից, միայն Այառան էր նայում նրա վերան կարեկցութեամբ և խղճութեամբ:

Ա երջապէս երկայն և ձանձրալի լոռւթիւնից յետ Տիկին Դրումմօնդը հարցրուց:

— Յակովի, ոչինչ չեմ կարող ասել քեզ Ճշմարտացնելու համար: Ես կարող եմ քո խօսքերը ասել իմ մարդին, երբ որ բարկութիւնը անցկենայ:

Բայց Յակովը շատ վշտացած էր սըրտով, որ չէր կարողանում հանգիստ խօսել.

լասն որոյ կցկտուր ասաց:

—Ես ճշմարտուելու ո՛չինչ չ'ունեմ: Եթէ դուք կամենումէք մի բան ասել ինձ համար ձեր ամսւանուն, ապա՝ ասացէք ինչ դրեմ, որ ես կաշխատեմ մոռանալ ինձ պատճառած վիշտը: Վ.յս պատասխանը Դրումմօնդ տիկնոջ այնքան հակառակ երկեցաք, որ ո՛չ մի խօսք չ'խօսելով նա երեսը շուռ տուաւ և գուրս եկաւ սենեակից: Յակովբը և Առան միացին մեն մենակ, բարի աղջիկը բռնեց Յակովբի ձեռնը և դառնապէս լալով խոնարհացրեց իւր գլուխը նրա ուսին:

Յակովբն էլ հեկեկում էր և սիրութ սաստիկ վերաւորութիւնից ժամանակ ժամանակ դողումէր սաստիկ:

—Առաջ, սիրելիս, վերջապէս ասաց Յակովբը, գօնէ՝ դու հաւատացիր, որ ես անմեղ եմ: Ես քեզ պատրաստ եմ բոլորը պատմելու և դու կ'տեսնես, որ ես այնքան շարասիրտ, ծոյլ և անհոգ չեմ, ինչպէս որ քո՞ հայրը ինձ վերայ միտք է տանում:

“Ա, նստեց Առայի մօտ մնջ նստարանի վերայ և նրան պատմեց մանրամասնաբար, ինչպէս Գօձօնը անդթարար վարուեց նրա հետ, ինչպէս նա միշտ նեղացնում էր և վերջապէս մտքումը դրեց խփելու:

—Առայ, դու ինձ լւա գիտում ես և սի-

րում ես, 'ի հարկէ դու չես կարծիլ որ ես քեզ խարում եմ: Հիմակ ես կ'հանգստանամ, որովհետեւ դոնէ մի մարդ անբողջ տան մէջ ինձ չեմ մեղագրում, իբրեւ շար և անգոհ պատանու: Բազգաւոր լինես, Առայ, ես էլքեզ չեմ մոռանալ:

Խեղճ երեխայն լալով գրկեց իւր ընկերակցին եւ այդպէս բաժանուեց: Երբոր Յակովբը ուզումէր դուրս գալ, Առան նկատելով Յակովբի փողերը, որ դրուած էին գեռ այնտեղ, ուրտեղ դրած էր իւր հայրը, գարձաւ Յակովբին եւ ասաց, „Դէ վեր առ այս փողերը:”

—Ո՛չ պատասխանեց Յակովբը, ես չեմ վեր առնիլ Ինչ որ առաջարկեցին ինձ բարեկամաբար եւ բարիստից ես ընդունիցի յօժաբութեամբ եւ շնորհակալութեամբ: Ինյաց այս փողերը ինձ գձել են ինչպէս ողորմութիւն. սրա համար ես ընդունում չեմ. Տար դրանց քո՞ հօր մօտ եւ աս'ա որ ես վեր չեմ առնում:

Առան, բոլորովին չ'հասկանալով Յակովբի սիրութ, գնելով փողերը իւր գոգնոցի մէջ հեռացաւ: Յակովբը սպասեց մինչեւ նրա քայլերի ձայնը հանդարտուեցաւ, յետոյ գնալով իւր սենեակը, ժողովեց իւր բաները և թողաւ արտասուբով այն տունը, ուրտեղ

յառաջ նա այնպէս բարութիւն էր տեսած,
իսկ հիմակ նրան վանտում էին:

Դուքս գալով բաց օդ. նա նստեց մի
խոտի նստարանի վերայ եւ սկսեց մտածել,
թէ ինչ բանի հիմակ նա կպչե:

Զկամենալով էլ աւելի ծառայել Դրուժ-
մօնդին, նա վճռեց չգնալ նրա նաւը նա
մի բարակ հասկանումէր, որ քանդելով
Դրուժմօնդի հետ բոլոր յարաբերութիւնները
առանց ճշմարտուելու մի լաւ վարմունք չէ
եւ թէ վերջումը նա կ'զզջայ, բոյց այս
նրա մեղադրելը բոլորովին նրան փոխարկել
էր: 'Կա մոռացաւ ինչ որ պարտէ Դրուժ-
մօնդին. նրա բոլոր բարի զգացմունքները
դարձան բոպէական գեղ ՚ի ցածրութեան
գառն զգացմունք:

Ե՞յս ժամանակ նա համարեա բոլորովին
առումէր Դրուժմօնդին, որ այնքան ժամա-
նակ բարի է եղել, ուշադիր և հիմակ նա
նրա հետ վատ վարուեց միայն նրա համար,
որ սաստիկ խարուած էր:

'Աերկայացնելով իւր աչքին իւր գրու-
թիւնը Յակովբը վերջապէս վճռեց դառնա-
լու Տուրնբույլ նաւապետի օգնութեան և
խորհուրդներին: (Տուրնբույլը արդէն մէջ
ծանօթ է.)

Գ Լ Ո Ւ Խ Վ Ե Ց Ե Բ Ո Ւ Գ

Յակովբը դառնում է նաւակա- վար:

Տուրնբոյլը լսելով Յակովբի սրտաշարժ
անցքը, ասաց. „Դէհ, սիրելի ս, գործը վատ
է: Լաւ կ'լինի, եթէ թողնես, ես մի տես-
նուիմ Դրուժմօնդի հետ: Պարզ երկումէ,
որ քեզ հետ անարդար են վարուել, սրա
համար անպատճառ դու էլի կընդունուիս
նրա տունը և քեզ բամբասող Գաօնը և
Գուբէնսը կ'վանտուին. Դու ինձ վերայ
յոյս կապիր,”

—ԱՀ նաւապետ, պատասխանեց Յակովբը.
թողէք սա, ես ամենեին յետ չեմ դառնալ
Դրուժմօնդի տունը և երբէք ես նրանից
բարութիւն չեմ ընդունիլ. Ես էլ երախայ
չեմ, և կարող եմ ինքս ինձ համար հոգալ:
Ես ինքս եմ կամենում հաց ձարել, ինչպէս
որ լինի չլինի, Դրուժմօնդին ես ատումեմ:

—Ա աս է վատ. եղբայր Յակովբ. վերա-
բերեց նաւապետը — այդպիսի զգացմունքը
չէ: Ուէկ Դրուժմօնդը քեզ վշտացրեց.
Սակայն դու չպէտք է մոռանաս, որ առաջ
նա քեզ վերայ ինչպէս հայր էր հոգս
տանում: Ուրեմն յուսով եմ, որ դու խելօ-

քանաս, երբ քո բարկութիւնդ անցկենայ: Բայց հիմակ ինձ ասա՛, ինչ գործի կարող ե՞ս կպշել:

—Ես կարող եմ պաշտօնեայ մտնել պատերազմական նաւերից մէկի վերայ, պատասխանեց Յակովը: Բայց ես կամենում էի միալ թէմզայի վերայ և սովորել գետի վերայ նաւավարութեան:

—Ինչ ասեմ. պատասխանեց Տուրնելոյլը, կամենալով, որ Յակովը մնայ Լօնգոնում և պատերազմական նաւ մտնելը նրան շատ ժամանակով չպահէր. չկապէր: Ես, Յակովը, քեզ կօգնեմ: քեզ շուտով տեղ տալը ապրանքի նաւի վերայ գժուար է: Բայց ես ճանաչում եմ մի բարի նաւակ ունեցող Ատապը լլուն անունով, նա քեզ կ'ընդունի: Վ. յնու ամենայնիւ դու մէկ լաւ մտածի՞ր առաջ, ինչի որ կըպչումես. դու ծանօթ ես շատ գիտութիւների և քեզ համար վաստ պէտք է լինի ամբողջ օրերով նստել նաւակի վերայ, և մի քանի սկ փողերի համար տանել ու բերել մարդիկ գետի վերայ. դու կարող էիր աւելի լաւ գործ ճարել:

Բայց Յակովը հաստատ էր իւր կամքին և անպատճառ կամենումէր նաւակալար դառնալ: Տուրնելոյլը, կամենալով ժամանակ կորցնել մէջ տեղ, ընդունեց Յակովի կամ-

քը միայն նրանից խոստմունք պահանջեց, որ հէնց մի փոքր ազատ ժամանակ ունեցած օրը, նրան դայ այցելութեան:

Միւս օրը նաւապետը տարաւ Յակովլրին ծեր Ատապըլլոտնի մօտ, որ իսկոյն ընդունեց մեր մատաղ պաշտօնէին: Յակովը այս նոր տէրը ապրում էր թէմզայի ափին մի փոքրիկ տան մէջ Լօնգոնի մօտ:

Ատապըլլոտնը ծեր և յիմար էր, նա անցէր կացրած իւր կեանքի մեծ մասը հիւրանոցում, գարեջուր խմելով և ամբողջ օրը կ'նսաներ ծխախօտը բերանին: Չեռքը տալով նա Յակովըին ասաց:

— Վ. ելորդ է շատ խօսել. ես արգէն շատ ծեր եմ սիրելիս և սիրումեմ աւելի հանգստութիւն: Ես կարողութիւն չունեմ քեզ համար հոգալու, գնա՛ աշխատի՞ր ինչքան կարող ես: Վ. շնատանքիդ երկու երրորդ մասը (Երեսից Երեսով) դու վեր առ. իսկ մի երրորդը (Երեսից մէջ) ինձ. համաձայնե՞ս այսպէս:

— Ընորհակալ եմ ու շատ ուրախ, վերաբերեց Յակովը:

— Դէհ, բանը վերջացաւ. Տուր ձեռքդ Յակովը և գնա Տէրը քեզ հետ: Վ. յս խոսքերից յետոյ ծխախօտը բերանին Ատապըլլոտնը ներս քաշուեց հիւրանոց, նստաւ

մի աման գարեջրի մօտ և մոռացաւ Յակով-
բի վերայ մտածել անդամ:

Յակովբը գնաց ափը, բացարաւ նաւա-
կը, ասարաւ այնտեղը, ուրտեղ շատ անցկա-
ցող մարդիկ կային (Քիւ առ առ) և սկսեց
իւր գործը յառաջ տանել: Վայցկացաւ ամա-
ռը, եկաւ ձմեռը, թէմզան սառեց և Յա-
կովբը պէտք է թողնէր իւր գործը: Նի-
մակ նա ամէն օր այցելութիւն էր (Պէտ-
թիւն) գնում Տուրնբոյլին: Սա մի այնպէս
մարդ էր, որի հետ Յակովբը միշտ կարող
էր համարձակ լինել և սրտակից բոլոր
զգացմունքներում: Ո՞չկ անդամ Տուրնբոյլ
նաւապետը հրաւիրեց (կանչէց) Յակովին
ժողովրդական տօնախմբութեան օրը սառած
թէմզայի վերայ զբոսանք անելու: Յակովբը
համաձայնուեց և նրանք գնացին միասին.
Տօնախմբութիւնը շատ քաղցր թուեց նրանց
շատ գեղեցիկ և գոյնզգոյն տեսարաններով:
Ամէն տեղ բալխիրների և սահնակների
վերայ փոքր մանուկներ գրօշակները ձեռ-
քին ման էին գալիս: Շատ տեղերում կրակ-
ներ էին վառուած, ուրտեղ եփում էին և
տապակում նախաճաշիկ: Ի՞աղցը երգեր,
ծիծաղ և խօսակցութիւն հնչում էին վրան-
ներից, ուրտեղ ժողովրդեան հիւրնկալում
էին զարեջրով և գինով: Երեք ժամ շրու-

նակ Տուրնբոյլը և Յակովբը ման էին
գալիս ժողովրդեան մէջ յանկարծ բարձրա-
ցաւ հիւսիսային ցուրդ քամին. զբոսանքը
էլ ախորժելի չէր, սրա համար նրանք յետ
դարձան տուն:

Վայ ժամանակ սաստիկ քամին թագրեց
Տուրնբոյլի գլխից գտակը և նրան գլորեց
սառուցի վերայ հեռու, հեռու:

Վաւապետը և Յակովբը ընկան գտակի
յետեից, որ բոնեն, բայց նրանց բոլոր աշ-
խատանքը զուր եղան: Ճաղովուրդն էլ ծի-
ծաղումէր և հետաքրքրութեամբ նայում էր
նրանց օրսի վերայ: Տուրնբոյլը վազումէր
առաջից և միտք չէր դարձնում սառուցի
վերայ, այնպէս որ հասնելով մէկ տեղի,
որ ջուրը նոր էր գեռ սառած: յանկարծ
սառուցը կոտրուեցաւ պինդ ձայնով և նա
ընկաւ ջրի մէջ: Ո՞չկ աղաղսկ հաղիւ թէ
նա կարողացաւ անել իսկոյն անհետացաւ
սառուցի տակ:

Յակովբը քար գարձաւ սարսափից, բայց
իրան չկորցրաւ: Շուտ հանեց նա իւր
շորերը և ընկաւ ջուրը Տուրնբոյլի յետեից,
որ կամ ազատի նրան անպատճառ կամ թէ
չէ, մեռնի նրա հետ:
Ջրի տակ մտնելով, նա ուղղուեց հոսանքով
և մի քանի վայրկեան գեռ անցած չէր, որ

ահա Տուրնբոյլը բռնեց նրա շապկից, ժողովելով բոլոր ոյժը Յակովբը յետ դարձաւ և շուտով դուրս եկաւ սառուցի տակից: Հաղիւ թէ նա երեւցաւ ջրի մակերևոյթին (Երեխն), իսկոյն մարդիկը, որ եկել էին նայելու, տուին նրան ձող: Յակովբը բռնեց նրանից եւ անվնաս դուրս եկաւ նաւապետի հետ սառուցի վերայ: Երկուսն էլ այնտեղ ուշից գնացին:

Մարդիկը տարին նրանց մօտիկ հիւրանոցը և հաղիւ կարողացան նրանց ուշքի բերելու: Միւս օրը հաղիւ թէ կարողանում էին Տուրնբոյլը և Յակովբը գնալ (Հաստով) իրանց բնակրանը:

Յակովբը ունենալով պինդ կազմուածք և լինելով պատանի շատ շուտով առողջացաւ, բայց նաւապետը սաստիկ հիւան դացաւ և երկայն ժամանակ պառկեց անկողնում:

Իոլոր այս ժամանակը Յակովբը մի բապէ անդամ չէր թողնում նրան եւ հոգացողութեամբ նայումէր: Առաջին օրերը նաւապետը շատ քիչ էր խօսում եւ միայն հայեցքով էր ցոյց տալիս իւր շնորհակալութիւնը Յակովբին, իսկ երբ նա առաջին անդամ կարողացաւ անկողնքում նստել ուրախութեամբ նայելով ասաց:

— Լոի՛ր Յակովբ, դու աղատեցիր իմ

կեանքը. քո կեանքդ ենթարկելով վասնդի եւ ես աւելորդ եմ համարում բոլորը ասելու, ինչոր ես զգում եմ քո հաւատարմութեան համար: Ես քեզ խնդրում թողնել նաւալարութիւնը եւ պտոել ուրիշ պարապմունք, որ աւելի շուտով կարող էր նշանակութիւն տալ քեզ: Լոի՛ր ինձ Յակովբ:

Յակովբը լուած էր: Երբ նա մտածում էր ուրիշ հոգսատարութիւնը, իսկոյն մտաբերումէր այն անիրաւութիւնը, որ պատահեց Դրումծնդի մօտ: Նա վախենում էր ընդունել Տուրնբոյլի առաջարկութիւնը, մտածելով, որ կարելի է սա էլ այնպէս անարդար վարուի, ինչպէս Դրումծնդը: Նա շատ սիրումէր նաւապետին, հենց սրա համար նա չ'ուզեց նրանից բարութիւն ստանալ: Նա բաւական էր իւր ազատ կեանքով եւ չէր կամենում փոխել նրան, թէեւ հանգիստ, բայց անազատ կեանքի: Վասն որոյ Յակովբը լուած էր, չգիտենալով ինչպէս ասի Տուրնբոյլին իւր անհամաձայնութիւնը: Նա չէր կամենում սիրութերաւորել այն մարդի, որին սիրումէր, բայց չէր էլ կամենում նոյնպէս համաձայնիւ նրա կամքին:

Նաւապետը հասկացաւ այս ներքին

կոիւը, մօտեցրաւ իրան պատանուն, սղմեց
իւր կուրծքին. զրկեց, եւ սիրալի ձայնով
ասաց:

—Յակովը, ես քեզ չեմ արձակիլ մինչեւ
դու չհամաձայնուիս իմ խնդրքին: Ես
անզաւակ եմ, բայց շատ կ'ցանկանայի ունե-
նալ մէկը, որին ես հոգայի, ինչպէս որդու:
Դարձիր ինձ որդի Յակովը. խոստանում
եմ քեզ, որ դու ամեննեւին չ'ես զղջալ,
կապելով քո վիճակը ինձ հետ: Համաձայ-
նուիր աղաջումեմ, եղի՛ր իմ բարի եւ սիրե-
լի որդին:

Յակովը, լսելով այսպիսի սիրելի եւ
քնքոյշ խոսքեր, բոլոր մարմնով դուզաց եւ
աչքերը լքցուեցին արտասունքով: Չնայե-
լով սրան, նրա սրտում գեռ մնացած էր
անցկացած օրերից յիշողութիւնը, եւ ահա
հեկեկալով նա պատասխանեց, Տուրնբուլին:

—Կաւապետ, ես զգում եմ թէ դուք որ
չափ բարի էք դէպ'ի ինձ. դուք մինչեւ
անգամ չափազանց բարի էք: Ես սա ամե-
նեւին մոռանալու չեմ եւ կաշխատեմ
ճշմարտել ձեր յոյուր: Բայց խնդրումեմ
թողէք ինձ իմ առաջուայ գրութեանս մէջ
եւ հաւատացէք, որ որդւոյ շնորհակալու-
թիւնը եւ հաւատարմութիւնը, զօրաւոր չէ
կարող լինել նրանից. ինչ ես զգում եմ:

Թաղէք ինձ անկախ եւ աղատ:

Կաւապետը վշտացած շարժեց զլուխը
եւ մի քանի բոլոր ջետ պատասխանեց:
Տեսնում եմ Յակովը, որ իմ բոլոր ջանքս
զուր է, շատ ինձ գառն է քո հակառակու-
թիւնը. բայց գեռ ես հպատակւումեմ.
Միայն մէկ բան եմ աղաչում քեզ Յակովը,
քո սիրտդ մի խստացնիլ առաջին անգամ
տեսած անարդարութեամբ. Մի կարծիլ
թէ աշխարհում բոլորն էլ վատ են եւ չար.
Երբ որ քեզ մի մարդ անգիտութեամբ
վշտացրեց. Կրում խնդը խարուած էր եւ
սրա պատճառաւ նա այդպէս խօսքեր քեզ
ասաց, նա վաղուց արդէն զղջացել է իւր
սիսալմունքի համար եւ քո մատն ողներիդ
դուրս է բերել իւր տան ից, ների՛ր նրան
արգէն նրա սիսալմունքի համար:

—Պէտք, ես նրան ներում եմ. և ներումեմ
բոլոր որտէ. պատասխանեց Յակովը,
շարժուելով իւր բարեկամի քնքոյշ և աղ-
դու խօսքերով: Ես կ'գնամ նրան մօտ և
կ'ասեմ, որ նա խափուած էր և նրան պէտ-
քէ սիրեմ կրկին այնպէս, ինչպէս յառաջ:
Բայց նոր գործ ես նրանից չեմ ընդունիլ:
Այս շփոթում է իմ հոգիս և կարծեմ ես,
որ սիսալվում չեմ:

Տուրնբուլ նաւապետը բաւականացաւ

Յակովի բի այս խոստմունքով և քաղցրութեամբ ու հանդարտ սղմեց նրա ձեռքը և ասաց:

— Ե. Յ., այդպէս. սիրելիս, չես հիմակ բոլոր սրտով ուրախ եմ, որ դու յաղթեցիր վերջապէս քո ատելութիւնդ. Դեհ շուտով կատարի՞ր քո դիտաւորութիւնդ. Հաշտուելով Դրումմօնդի հետ, դու աւելի թեթև և բաւական կ'զգաս քեզ. քան հիմակ:

Արանով և վերջացաւ խօսակցութիւնը: Տուրնբույլ նաւապետը դեռ մի քանի ժամանակ յետաձգեց իւր դիտաւորութիւնը Յակովի համար:

Գ Լ Ա Խ Խ Ե Օ Թ Ա Ե Բ Ա Ր Դ

Յակովիր հաշտումէ Դրումմօնդի հետ և պատահումէ իւր թշնամիներին:

Միւս օրը Յակովիր գնաց Դրումմօնդի մօտ: Նենց որ անցկացան նրա սրտից ատելութիւն և չարութիւնը, նա սկսեց մտաքերել առաջուայ հայրական և բարեկամական վարմունքները Դրումմօնդի և փոքր առ փոքր շնորհակալութեան զգացմունքը բոլո-

րովին յաղթեց ատելութեան, որ ուներ նա մի փոքր յառաջ իւր սրտում: Երբէք նա իրան այսպէս թեթև և ուրախ չ'էր զգացած ինչպէս հիմակ, երբ նա գնումէր այն ճանապարհով ուրախ մի քանի օր յառաջ ինչ-անէիր չ'էր գնալ: Մտնելով տուն, նա պտառում էր մարդ, որ իմաց տար Դրումմօնդին նրա գալը և ահա նա պատահեց Սառային: Ո՞հ ուրախ ժպիտ փայլեց նազելի օրիորդի երեսին և նա ուրախ ձայնով մօտ վազեց Յակովիրին:

— Յակովիր, Յակովիր, ասաց նա, ա՞խ ինչպէս կուրախանան հայրիկը և մայրիկը, գնանք շուտով նրանց մօտ:

Առան տարաւ նրան այն սենեակը, ուր Դրումմօնդը նստած էր իւր կնկայ հետ: Տեսնելով Յակովիրին երկուոն էլ ուրախացան: Դրումմօնդը ինքը առաջ մօտեցաւ նրան, բռնեց ձեռը և 'ի սրտէ ուրախացած ասաց:

— Յակովիր, ես ո՛չ մէկ բանով այնքան ուրախ չ'եմ, ինչքան նրանով, որ ես կրկին քեզ տեսնումեմ տանս մէջ: Ես իմանումեմ, որ մեղաւոր էի և 'ի սրտէ զզջացայ: Քո բանբասովները հեռացել են իմ տնիցը և ես յայս ունիմ Յակովիր, որ դու ինձ կ'ներես բոլորովին իմ սխալմոնքը:

Դրումմօնդի այս յանկարծակի քաղցր ընդունելութիւնը՝ բարեկամական վարմունքը և առաւել այն, որ նա ինքը խոստովանեց իւր սխալը, այնքան շարժեցին Յակովի սիրտը, որ նա լաց եղաւ, ինչպէս երեխայ: Ուստան էլ խոնարհեցնելով իւր գանգուր գլխիկը նրա կրծքի վերայ, նոյնպէս լաց էր լինում կարեկցութիւնից:

Եթէ Յակովի սրտում մնացել էր մի փոքր ատելութիւն գոնեայ, ապա այս րոպէն պէտք է անհետանար: 'Կա մտաբերեց իւր մանկութիւնը, որ ինչպէս մնալով որբ, ընդունուած էր այս ընտանիքի մէջ, որ ինչպէս Դրումմօնդը հոգում էր նրա կրթութեան համար և ամէն կողմով աշխատումէր նրան բաղդաւորացնել: 'Կա իրան զգում էր մեղաւոր, վասն որոյ մօտիկանալով Դրումմօնդին նա ՚ի սրտէ խնդրեց նրանից ներողութիւն:

— անգստացի՛ր, բարեկամ, խօսքը կտրեց Դրումմօնդը, կարելի է որ մեք երկուսս էլ մեղաւոր ենք, ուրեմն ներենք միմիանց: Լաւը այն է ամենեին չխօսենք սրա վերայ. համարենք այնպէս, իբր ամենեին այդպէս բան մեր մէջ եղած չէ:

Յուսով եմ, որ դու եգուց կ'զաս ինձ մօտ և կրկին կ'բանես քո առաջուայ պաշտօնդ:

Յակովը շփոթուեց և խօսք էր պառաւմ. ինչքան կարելի է քաղցր խօսքեր, որ հրաժարուի այդ առաջարկութիւնից և վերջապէս ասաց հանդարտ:

— Ո՛չ: ինձնից այդ բանը մի՛ պահանջէք: Թողէք ինձ այն գետի վերայ, որի վերայ ես ծնուել եմ, ինձ մի կելի իմ հայրենիքից, որին համարեա ես իմ մանկութիւնից նշանակուած եմ. Ես այժմ ազատ եմ և բոլորվին բաղդաւոր:

Դրումմօնդը կարծես հէնց սպասում էր մի այդպէս պատասխանի և սրա համար չզարմացաւ: Վ, յուռ ամենայնիւ նա չուզեց այդպէս թեթև թողնելու իւր կամքը և ասաց:

— Աս անկարելի է Յակովը, որ գուռնենալով լաւ կրթութիւն, քեզ բաղդաւոր համարէիր այն վիճակի մէջ, որի մէջ ամենին մի մտքի ու խելքի աշխատանք չ'կայ: Ոտածի՛ր լաւ իմ ասածներս և այդպէս շուտ մի հրաժարուի՛լ: Ո՛չ մէկ բանում մի նեղանալ, մեք քեզ համար միշտ պատրաստ ենք:

Վ, յս ասելով, նա գուրս եկաւ սենեակից և գնաց իւր գործի յետեից, թողնելով Յակովըին, իւր կնոջ և Ուսուայի հետ Կա իմանում էր, որ Ուսուան անպատճառ Յա-

կովբին կ'աղաչի մնալ նրանց մօտ: Եւ
յիրաւի այդպէս էլ եղաւ, նա և մայրը
սկսեցին հանդարտութեամբ համոզելու Յա-
կովբին, որ լնդունի Պրումմօնդի առաջար-
կութիւնը: Արանք հակառակում էին նրա
աղատութեան, բայց նրանից հրաժարուիլ էլ
նա, չէր կարող վասն որոյ խոստացաւ
ժամանակով յետ դառնալ հաշուասենեակ:
Արանով վերջացնելով խօսակցութիւնը, նա
մնաք բարե ասաց և տուն դարձաւ իւր հի-
ւանդ բարեկամի Տուրնբոյի մօտ: Ճ'անա-
պարհին նա առողջ և պարզ դատողութեամբ
մտածում էր Պրումմօնդի ասածների վերայ
և վերջապէս խօստովանուեց, որ նա ասած
էր անկեղծ և նրա վիճակը լաւացնելու
նպատակաւ: Ո՞ի և նոյն ժամանակը նրա
առաջ պարզուեց և այն, որ նա նաւակավա-
րութեամբ բոլորովին բազգաւոր չէ, թէև
հպարտութիւնը չէր թողնում նրան բաց և
արձակ խօստովանուիլ: Յիրաւի Յակովբը
այնքան բաղդաւոր չէր իւր ազատ կեանքով
ինչքան որ ինքը մտածում էր: Ա,ա կատե-
նում էր աւելի խելամիտ գործունէութիւն,
քան թէ տանել ու բերել մարդիկ թէմզայի
մէկ ափից միւսը:

Հիմակ կ'հարցնես դու ինձ սիրելի
ընթերցող թէ ինչու Յակովբը չէր կամ-

նում խոստավանուիլ: Ինչու համար չ'էր
համաձայնում, երբոր նրան բաւական էր
միայն մի խօսք որ ուրիշ վիճակի մէջ մտնի:

Շատ հաստրակ պատճառ էր, հպար-
տութիւնն էր նրան շփոթում: Ա,ա վախե-
նում էր խօստովանելու իւր սխալը կարծե-
լով թէ այդպիսի խոստավանութիւնը
ցածրութիւն է:

Զենոր անցկացաւ շուտով եւ երբ գար-
նանախն քամին սրբեց թէմզան սառուցնե-
րից, Յակովբը կրկին կարող էր սկսելու-
իւր առաջուայ պարապմունքը: Այս
ժամանակ Տուրնբույլը այնքան ասողջացած
էր, որ կարելի էր արդէն թողնել առանց
նայելու նրա յետեւից:

Յակովբը գեռ շարունակումէր հակառա-
կել և չ'էր լսում ո՛չ Պրումմօնդի
ինդիրքներին ո՛չ նաւապետի անկեղծ
խորհրդներին եւ ֆեաց առաջուայ նման
նաւակավար: Ո՞իհանգամ երեկոյեան գէմ
Յակովբը գնում էր թէմզայի միջով, կամե-
նալով տանել իւր նաւակը այնտեղ, ուր
կենումն բոլոր այդպիսի նաւակները: Բայց
շատ գեղեցիկ եւ չքնաղ երեկոյ էր, եւ
այնպէս տաք ու հանդարտ, որ Յակովբը
մտքումը գրեց ցած գնալ փոքր ինչ ջրի
հօսանքով: Ա,ա ցած գրաւ թիակները եւ

նաւակը ջրի հոսանքին թողնելով սկսաւ իւր համար մտածել:

Ի՞այց յանկարծ նա վեր թռաւ մի սաստիկ ծիծաղից եւ խօսակցութիւնից, նա նայեց եւ տեսաւ մօտիկացող նաւակ. միջին մի քանի մարդ նստած, որոց կերպարանքը նա որոշել չէր կարողանում, որովհետեւ մուժ էր: Ի՞այց նրանք խօսում էին այնպէս բարձրաձայն, որ Յակովը կարողացաւ լսել նրանց ամէն մի խօսքը: Նրանք խօսում էին ծամածող խաղարկուների (ճանիպաշների) վերայ:

— Ի՞չ ես էլ եմ կարող փայտ պտտեցնել եթէ ասես ասաց նաւակի մէջ նստողներից մէկը:

Վայս խօսքիս վերայ նա կանգնեց նաւակի մէջ, վեր առաւ թեակը իւր գլխի վերան եւ նրան պտտեցնելով գծում էր եւ աշխատումէր բռնել մէկ ձեռքով: Տարապդաբար նաւակը օրորուեց, խաղացողը չի կարողացաւ բռնել թիակը նորէն եւ նա (Ականան) ընկաւ նաւակ վերայ հաստ ծայրով այնպէս սաստիկ, որ կոտրեց ներքի տախտակներից մէկը եւ ջուրը սկսեց մէջ թափուիլ:

Մի քանի բոպէից յետ նաւակը սկսաւ, ընկղմուիլ նորա մէջի նստողները սկսան

օգնութիւն կանչել եւ աղաղակել: Յակովը վեր առաւ թիակը եւ շտապեց նրանց մօտ: Ի՞այց նաւակը մինչեւ եղերքը արդէն ջուրն էր մտել եւ յուսահատուած կանչում էին խեղդողները: Կաւակը շղեց, բայց բաղտաւորաբար ո՛չ մէկին իւր տակը չծածկեց, մարդիկը վեր լողացին եւ աշխատում էին նաւից բռնել, բայց ձեռները սահնում էր, որովհետեւ նաւակի փայտերը թաց էին:

— Ինձ, ինձ աղատիր ես քեզ փող կ'տամ, ասաց մէկ ձայն, որ շատ ծանօթ էր Յակովին:

Յակովը փոքր ինչ կերպարանքը կնձուց, բայց իսկոյն շտափեց ձեռը երկարեցնելու և քաշեց նրան նաւակի մօտ, որ իսկոյն վախվխելով բռնեց եղերքներից:

Եետոյ Յակովը դառնալով միւս մարդին, որ պատճառ էր եղել բոլոր այդ փորձանքներին, մօտեցրաւ նրան թիակը: Ի՞այց նա չընդունեց և ասաց:

— Ո՛չ ո՛չ: աղատիր գու ուրիշներին ես լողալ գիտեմ. չեմ խեղդուիլ:

Եւ նա սկսեց օգնել ուրիշներին ջրի վերայ մնալ, մինչեւ Յակովը քաշեց բարձր գեռ երկուսին էլ և կարծումէր, որ ամենին աղատել է, բայց յանկարծ նա նկատեց մի մարդ, որ ջրի մէջ թփթփումէր և որին

պահումէր այն մարդը, որ ասումէր թէ
լողալ գիտէ: Յակովը հայեացքով ձանաշեց
արգէն որ սա Դրումօնդի փոքրիկ հաշուէ-
պահն էր Գուրէնսը, իսկ նա, որին ամենից
առաջ էր ազատել Գոծօնն էր, բայց նա գեռ
չ'յիշելով հին օքերի թշնամութիւնը ձգեց
խեղդւողին թիակը և հանեց նրան, և այն
մարդին, որ նրան պահումէր:

Եւ այսպէս բոլորն էլ ազատուեցան,
Յակովը գէպ՝ ի ափ ուղղուելով խնդրեց
նրանցից պինդ բանեն նաւի եղբքներից:
Բայց Գոծօնը հակառակում էր և պահան-
ջում էր, որ նրան թողնեն նաւակի բոլորո-
վին եղբքը:

Յակովը խնդրեց նրան հանգարտուիլ,
ասելով, «ը եթէ նա նաւի եղբքը գնայ
կարող է նրան շըցել: Բայց Գոծօնը գեռ
շարունակումէր հակառակի և աշխատումէր
մինչև անգամ ուժով տախտակից անցնել: Եր-
շամանակ Յակովը կանչեց անհամբե-
րութեամբ:

—Եթէ միւս անգամը նաւի մէջ կուղենաք
մանել ես ձեղ կ'գձեմ այն կողմը: Միտո-
րեր ինձ պարոն Գոծօն: Ես Յակով Եր-
լիխն եմ, որին Դրումօնդը ձեր շնորհով
իրան տանից գուրս արաւ, ինձ մի՛ ստիպէք
ձեղ պատժի փոխարէնը տալու:

Գոծօնը հանգստացաւ, իսկ Գուրէնսը
աշխատում էր ծածկել իւր երեսը:

Յակովը նստեց և սկսեց թիավարել
գէպ՝ ի ափ. փոքր ժամանակից յետ նա
հասաւ ափին և հանեց ցամաք բոլորովին
թրջուած մարդկերանց: Այս ժամանակ այն
մարդը, որ Յակովը հետ միասին ազատեց
իւր ընկեներին մոտեցաւ նրան և ասաց:

—Լոիր բարեկամ, ես էի պատճառը բոլոր
փորձանքների և ես սրտավ ուրախ եմ, որ
դուք ազատեցիք իմ ընկերներիս, թէ
նրանք բոլորը չ'արժէն մի ձուի էլ: Եհա...
ինչ ես կարող եմ ձեզ առաջարկել աշխա-
տութեան վարձ, բայց սրանով ընդունեցէք
և իմ անկեղծ շնորհակալութիւնս...»

Յակովը չ'ընդունեց փողը, որ նա տա-
լիս էր և ասաց:

—շատ շնորհակալ եմ, այս գործի համար
ես մի լոււմայ էլ (Պօլաշչունիլ) չ'եմ ընդունիլ:
Ես շատ ուրախ եմ, որ կարողացայ մի քա-
նի մարդ ազատել, թէ և նրանք Գոծօն և
Գուրէնսն են, մնաք բարեաւ, և Յակովը
վեր առաւ թիակը, որ գնայ:

—Ոպասեցէք, սպասեցէք բացականշեց ան-
ծանօթը, ինչպէս է ձեր անունը:

—Ոս աւելորդ բան է պատասխանեց Յա-
կովը:

— Ուրեմն միտք պահեցէք գօնէ իմ անունս.
իմ աղդանունըս Ա իլսօն է:

— Ես նաւատորմիլի լէյտենանտն եմ. եթէ
դուք մէկ կարիք, հարկաւորութիւն ունենաք
ինձ մի մոռանաք. ես միշտ պատրաստ եմ
ձեզ օգնելու. մի մոռանաք. մնաք բարեաւ:
Եւ նրանք բաժանուեցան միմանցից:

Գ Ե Ա Խ Խ Ո Ւ Թ Ե Բ Ո Ր Դ Ե Խ Ա Խ Ը Գ Ի Կ Ա

Վակովը արդէն սկսուած էր. Դրումմօն-
դը և Տուրնբույլը, որ սիրում էին Յա-
կովին իբրև որդի, գեռ չէին կարողացել
համոզել որ նա թողնի նաւախավարութիւնը:
Յակովին էլ արդէն այնքան սիրում չէր այս
պարապմունքը, բայց անկախութեան սէրը
և հպարտութիւնը նրան թողնում չէին
ընդունել շուտով Դրումմօնդի առաջարկու-
թիւնը. Եհա պտուղ սուտ հպարտութեան:
Ո՞ւէկ անգամ Յակովը երբ ըստ իւր
սովորութեան նստած էր նաւահանգստի
մօտ իւր նաւակի մէջ, մէկ ծովագնաց մօտի-
կանալով կանչեց:
— Ե՞ւ նաւակավար, տարէք ինձ նաւի

մօտ, որ կանգնած է թահմույի բերանին
(Ավագանը). Նա շուտով պէտքէ խարիսխը
հանի, սրա համար բոլոր ուժով պէտք է
թիավարել. Ա արձը պակաս պակաս չ'եմ
տալ, համաձայն էք:

Յակովը գինը խօսեց և յետոյ ծովա-
գնացը իսկոյն թուաւ նաւակի մէջ և ասաց:
— Թիավարեցէք, որչափ կարելի է շուտ:
Ես զեկավար եմ և եթէ շուտով չհասնեմ
պատերազմական նաւին (Փրեգա՛), ինձ
վատ կ'լինի:

Յակովը այնպիսի եռանդով սկսեց
թիավարել որ քրտինքը ջրի նման հոսու-
մէր, և չնայելով հակառակ քամին, որ յետ
էր տանում նաւակը, ժամանակին հասաւ
նաւին: Ինայց այն բոպէին երբ նա կամե-
նումէր նաւակը մօտեցնել մէկ ուրիշ նաւակ
եկաւ սրա վերան այնպէս սաստիկ, որ
քթով (տառչնի հողմոն) ծակեց Յակովի
նաւակի կողքը: Կաւակը սկսաւ քաշանալ
և հազիւ թէ նրանք կարողացան չոր ու
առողջ նաւի երեսը գուրս գալ: Կաւը հէնց
իսկոյն խարիսխը բարձրացրաւ, նաւածառա-
ները բարձրացան կայմերի (նառառիների)
վերայ և սկսան պարզել առագաստները.
(Օֆիցիները կառավարում էին, պաշտօնեա-
ները շըջում էին առաջ ու յետ, տախտակա-

մածի վերայ այնպէս ազմուկ էր, որ հաղիւ կարող էր լսել մարդ իւր սեփհական ձայնը: Յակովի բերած մարդը, բերելու վարձ չվճարելով ճածկուեց, իսկ Յակովի ըգիտենալով ինչպէս յետ դառնալ ափը կանգնած էր տախտակամածի վերայ կարծես երկնքից իջաւ նաւի վերայ: Ա երջապէս նա մօտեցաւ օֆիցէրներից մէկին և քաղաքավարութեամբ ինդիրեց նաւակ, որ դառնայ ափը: — Ո՞վ ես գու, կոպտութեամբ հարցրուց օֆիցէրը: Յակովի պամեց, որ ով է նա և ինչպէս ընկաւ նաւի վերա: — Ես ձեզ նաւակ տալ չեմ կարող տասց օֆիցէրը, սպասեցէք նաւապետին: Կարելի է դուք կցանկանաք մնալ նաւի մէջ: Վ. Մ. պիսի պատանին լաւ նաւածառայ կարող է դառնալ (Վ. Մ. ժամանակ Ենգինայում գեռ (աղոթուայ) նաւածառաներ ժողովրում էին:)

Յակովի կամենում էր հակառակը խօսել, բայց օֆիցէրը ծիծաղելով շընեց երեսը գեպ՝ ի նրան մօտեցող զեկավարին, որին բերել էր Յակովի և բաւականին յանդիմանեց, որ այդքան ուշացել էր և ասաց:

— Վուք ժամանակը անցէք կացրել և ես պարտաւոր եմ նաւակ պատրաստելու, ձեր նաւարին ափը հասցնելու համար:

— Ո՞նդ հակառակն հանդարած լինելով այդպիսի ակա-

խորամանկ շարժողութեամբ պատասխանեց զեկավարը, ցանկանալով խօսքը փոխել ժամանակը կորցնելու մասին. այս երիտասարդը շատ ժիր և քաջ է և նրանից, ես քեզ հաւատացնում եմ, կարող է շատ լաւ նաւածառայ գուրս դալ: Ինչի համար դուք նրան այստեղ չեք թողնում մնալ:

— Կարծեմ, հէնց այդպէս էլ լինելու է, ասաց օֆիցէրը և հեռացաւ: Յակովի ըսուլոր խօսքերը լսելուց յետ մօտեցաւ զեկավարին և ասաց:

— Գեղեցիկ շնորհակալութիւն է իմ աշխատանացս համար ինձ ակամայ նաւածառայ գարձնել: Իարի եղէք, վճարեցէք ինձ իմ վարձս և ինձ մի նաւակ տուէք ափը յետ դառնալու:

Գեկավարը մի անհաճոյ կերպով ժպտաց և ասաց:

— Վուք այժմ իմ հպատակն էք և ես ձեզնից խմբում եմ վարուիլ ինձ հետ պատուապահութեամբ: Վուք փող չեք ստանալ և ես ձեզ խորհուրդ եմ տալիս լսել: Եթէ չեք բանը վատ կ'գնայ. Պէտք ոտ տեղդ...

Յակովի գարձաւ միւս օֆիցէրներին և նրանց գանգատեց. Վայց նրանք, ինչպէս երեսում էր սովորած լինելով այդպիսի ակա-

մայ նաւածառայ ժողովելուն, միայն ժպտում
էին, այնպէս որ նա ինքն էլ հասկացաւ, որ
հարկաւոր է հնականգել գոնէ մինչև նա-
ւապետի գուրս դալը:

Եթէ նաւապետն էլ համաձայնէր նրան
պահելու այն ժամանակ Յակովի միակ
աղատիչը կ'լինէր միայն Տուրնբոյլը. Յա-
կովի մտածեց, որ մեկ կերպ գտնի Տուրն-
բոյլին շուտիմաց տալու գործի հանգաման-
քը: Արա համար նա գուրս հանեց իւր
ծոցի տետրակից մի թուղթ, նրա վերայ մի
քանի բառ գրեց և յարմար միջոցի էր սպա-
սում որ ուզարկի նամակը: Բաղտաւորաբար
նաւի մօտով այդ ժամանակ լողում էր մի
նաւակ, մի ձկնորս մէջին: Յակովի կանչեց
նրան, նաւի մօտ բերել տուաւ, հասկացրաւ
նրան իւր զրութիւնը և խօստացաւ նրան
մէջ հատուցումն, եթէ նա զրա այդ նամա-
կը կ'հասցնի Տուրնբոյլին: Երբոր ձկնորսը
խօստացաւ կատարել յանձնարարութիւնը,
Յակովի գձեց նրան նամակը: Ձկնորսը
իսկոյն հեռացաւ եւ Յակովի փոքր ինչ
հանդարտաւեց, յոյս կապիլով, որ ինչպէս
լինի չլինի բարեկամները նրան առանց օգ-
նութեան չեն թողնիլ:

Վհա այս ժամանակ նա դադնապէս
զզձում էր, որ ինչու Դրումծնդի եւ Տու-

րնբոյլի Խորհուրդները չ'լսեց: Ա ասն որոյ
նա իրան խօսք տուաւ, որ եթէ աղատուի,
էլ յամառաբար չընդդիմանայ նրանց
ասածներին:

Ըուտով սրանից յետոյ տախտակամածը
գուրս եկաւ նաւապետը, նոր պաշտօնեային
նրան առաջարկեցին. Յակովի պատմեց բո-
լուրը ինչ որ պատահել էր նրա հետ եւ
ստիպողաբար պահանջումէր որ նրան ուզար-
կեն ափը: Կաւապետը լինելով մի խոժու
մարդ ամենեւին ուշը էլ չդարձրաւ նրա
ասածներին եւ ասաց:

— Դու կմաս... եւ ես քեզ խորհուրդ եմ
տալիս կատարել քո պարտաւորութիւնդ,
եթէ չ'ես կամենում փորձել առասանի ծայրը
(պատճի համար նշանակուած մի առարկայ
է չուանի ծայրում). Եւ այսպէս Յակովի
վերջին յոյսն էլ կործանուեց: Կա արդէն
պետք է հնազանգուէր իւր վիճակին, եւ
ահա յանկարծ նկատեց նա մի օֆիցէրի, որի
երեսը նրան շատ ծանօթ էր երեւում: Կա
սկսեց միտքը բերել եւ վերջապէս ձանաչեց,
որ դա լէյտենանտ Ա իլսօնն է, որին նա
դրանից փոքր յառաջ աղատել էր եւ որը
խօստացել էր նրան իւր օգնութիւնը ամէն
ժամանակ. Յակովի կրկին սկսեց յոյս կա-
պել Կա մօտիկացաւ Ա իլսօնին եւ խնդրեց

նրանից օգնութիւն, յիշեցնելով նրան
նրա հետ եղած պատահմունքը:

— Ե՛ւ.. այս քեզ են վեր առնում. իմ սիրելի ընկերակից, ասաց Ա իլսոնը, սպասի՞ր,
կ'աշխատեմ գործդ լաւացնել, քեզ համար
կ'աղաջնեմ: Միայն ասա, դու դեռ ծովի
վերայ աշակերտ ե՞ս:

— Ե՛ւ, ևս աշակերտ եմ պատասխանեց
Յակովը:

— Ուրեմն հանգիստ եղեր. օրէնքի զօրու
թեամբ ծովի աշակերտներին վեր առնել
կարելի չէ ակամայ: Դէ՛. դու այդ շուտ
ասէիր, որ դեռ աշակերտութեան մէջ ես.
դու վաղուց տանը եղած կ'լինէիր: Ե՞ս այս
րոպէիս կ'խօսեմ նաւապետի հետ:

‘ Ա, մօտեցաւ նաւապետին, որ դեռ
կանգնած էր տախտակամածի վերայ և եր-
կայն ժամանակ նրա հետ խօսում էր: Վառջ
նաւապետը անբաւական էր երեսում և խոժոռ
նայումէր Յակովի վերայ, բայց ինչքան
աւելի էր խօսում Ա իլսոնը, այնքան նաւա-
պետի երեսը պարզումէր և վերջապէս նա
կանչեց Յակովին իւր մօտ և հարցրուց:
— Շ'շմարիտ է, որ դու դեռ աշակերտ ես
ծովի վերայ:

— Շ'շմարիտ է, պատասխանեց Յակովը և
հանեց իսկոյն տետրակից վկայագիրը, որ

հաստատեց նրա ասածը:

‘ Աւեապետը նայեց թղթի վերայ, յետ
դարձրաւ Յակովին և պինդ ձայնով ասաց
մէջ Լէյտենանտին:

— Պատրիաստեցէք սրա համար նաւակ: Յե-
տոյ նա գառնալով Յակովին տուաւ նրան
իւր ձեռքը և ասաց քաղցրութեամբ:

— Լէյտենանտ Ա իլսոնը ձեզ համար ինձ
շատ լաւ բաներ ասաց, և ինձ հոգւոյ շափ
ուրախացնումէ, որ ձեր աղատման պատճառը
ձեր բարի գործքերն են, Վստուած ձեզ հետ,
գնացէք և եղէք բաղդաւոր:

Յակովը գլուխ տուաւ, շնորհակալու-
թիւն առաւ Լէյտենանտ Ա իլսոնից նրա
միջնորդութեան համար և թեթև ու ուրախ
սրտով թողեց նաւը: Ուրախութեամբ նա
ոտը դրաւ ցամաքի վերայ և ուղղակի դիմեց
Տուրնբոյլ նաւապետին, նա գտաւ նրան շատ
շփոթման մէջ: Տուրնբոյլը այն բոպէին էր
առացած Յակովի նամակը և կարծում էր,
որ նա արդէն ծովի մէջ է: Զափազանց
ուրախանալով իւր սիրելու աղատման համար
ընկաւ նրա վիզը և սղմեց իւր կուրծքին:

— Ա... Յակովը, բացագանչեց նա վեր-
ջապէս, երբ որ հանդարտուեցաւ նրա ուրա-
խութիւնը —

— Խելօքացա՞ր արդեօք դու:

ՈՒԽԹԷՇ դու դեռ լողարավին պատժուած
չես:

— Ինչ կամենում էք ինձ հետ արէք նաւապետ և մի՛ յիշէք իմ յիմարութիւններս։ Վ.յօ օրուայ անցըը ինձ ներօքագրաւ։

— ԸստՀակալութիւն նաւաստիներին, ասաց
ծիծաղելով Տուրնբոյլը, Յակովլը բնակուեց
Տուրնբոյլի մօտ և բոլոր եռանդով սկսեց
պարապուիլ Գրումմօնդի հաշուասենեակում
վաճառականական գործեր սովորելով:

Յակովի միւս կեանքի վեճակից կրերենք միայն այն, որ Կրումմօնդը տուառ նրան իւր միակ աղջիկը, այն իսկ Ապօպային, որի հետ Յակովը գեռ ծանօթացել էր մանկութեան ժամանակ:

ՊԵՐՅԱ



Մի բանի խօսք.

1.) Բաժմանորդագրութեան թերթերի մէջ
ես խոստացած էի գրեանց վերջումը զետե-
ղել բաժմանորդագրերի անունները. բայց
ցաւօք սրտի պէտք է ասել, որ այս անգամ
այդ չեմ կարող կատարել, որովհետեւ զեռ
չեմ ժողոված և ստացած այդ թերթերը
զանազան տեղերից. Բաժմանորդագրերի
անունները կ'ապագրուեն. "Տնտես,, գրքի
վերջումը:

2.) Տպագրական զանազան սիստեմները,
որոնք, սահմանվում իմ աշքից, մտած են
գրքայիս մէջ, թող ներողամտաբար դէպի
մեղ, ուղղէ ինքը բնիթեցուք:

3.) Բաժանորդագրութիւնը միւս երկու
գրեանց հետ շարունակւումէ մէկ մանէթով:
Այդ երեք գրքի գինը տպագրութիւնից
և առաջ կլինի 1 մանէթ 20 կոպէկ:

Φωτης:

Գինն է 30 կոպէկ:

Օախուսմէ Բազուխ մէջ

[թարգ. ^{Տարբե} մօտ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0387389

1410